

12(335)
30.04.2013

Հրատարակվում է
1999թ. սեպտեմբերից

Հանաչել զինաստրուքին եւ զխրատ, իմանալ զբանս հանճարոյ

ԼՍԱՐԱՐ

Лусарар

ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ԹԵՐԹ

Lusarar

ԿԱՐԵՎՈՐԸ Ո՞՞ ԹԵ ԺԱՄԿԵՏԻ Է, ԱՅՆ ԵՊԱՏԱԿԻՆ ՀԱՄԵԼԸ

Անցնող ամեն օրը մեզ ավելի է մոտեցնում Ցեղասպանության 100-ամյակին: Հայոց մեծ ողբերգության մեկդարյա տարելիցին պատրաստվում ենք ազգովի՝ կարծես թե թիրախ ունենալով 2015-ի ապրիլի 24-ը: Այն սպասումը կա, թե առաջիկա երկու տարում աշխարհն անպայման կճանաչի ու կդատապարտի մարդկության դեմ ուղղված զարեղի ոճիրը:

Նկատենք, թուրքիան և յուրովի պատրաստվում է դրան՝ օգտագործելով դիվանագիտական ներուժը, բնավ նյութական միջոցներ չխնայելով կեղծարարական հերթական դիվերսիաների համար: Օսմանյան կայսրության իրավաժառանգը, որն ուղղակի պատասխանատվություն ունի իր նախնիների կողմից կատարված ոճիրի համար, համախմբել է պաշտպանական ողջ զինանոցը: Եվ դա նրա այսօրվա հստակ մարտավարությունն է: Բայց չի բացառվում, որ նույն թուրքիան վաղը կարող է դիվանագիտական դաշտում իրականացնել նաև հարձակողական մարտավարություն: Իզուր չէ ասված՝ ամենալավ պաշտպանությունը հարձակումն է: Իսկ ինչքանով ենք մենք պատրաստ թուրքական նորանոր սադրանքներին...

Գերմանիան հրեաների ցեղասպանության համար պաշտոնապես ներողություն խնդրեց՝ դրանից բխող իրավական հետևանքներով: Գուցե պահն էր նպաստավոր, և Եվրոպայում նոր աշխարհաքաղաքական վերադասավորումները հնարավորություն ընձեռեցին հրեաներին՝ առաջնահերթելու իրենց հուզող խնդիրը: Միաժամանակ խոստովանեց, թուրքիան Գերմանիա չէ, որ կամք ու ազնվություն ունենա իր նախնիների կատարածի համար ապաշխարելու: Մի բան, սակայն, հստակորեն պարզ է՝ Հոլոքոստը ճանաչվեց հետևողական պահանջատիրության արդյունքում: Ինչ տասնամյակից ավելի, մենք մեր մեջ կրում ենք ցեղասպանության ծանր ցավը, և միայն Խորհրդային Միության փլուզումից հետո, հատկապես վերջին մի քանի տարում, Հայաստանը սկսեց պատմական արդարության վերականգնմանն ուղղված շոշափելի ջանքեր գործադրել: Տարեցտարի Հայոց ցեղասպանությունը ճանաչող երկրների թիվն ավելանում է, բայց չպիտի թիրախավորել 2015-ը՝ որպես պատմական փաստի համընդունման զագաթնակետ: Ճանաչումը, մանավանդ Հայոց ցեղասպանության պարագայում, տևական գործընթաց է, և կարևորը ոչ թե ժամկետն է, այլ իրապես դրան հասնելը, ինչին մենք չենք կասկածում:

Օրերս Ամենայն հայոց կաթողիկոս Գարեգին Բ-ն և Մեծի տան Կիլիկիո կաթողիկոս Արամ Առաջինը հանդես են եկել համատեղ հայտարարությամբ, որում կոչ են անում ճանաչել Հայոց ցեղասպանությունն ու ամբողջապես հատուցել հայ ժողովրդի կրած կորուստների և մարդկային ու ազգային ոտնահարված իրավունքների դիմաց: Երկու կաթողիկոսները թուրքիայից պահանջում են անհապաղ հայ ժողովրդին վերադարձնել հայկական եկեղեցիները, վանքերը, եկեղեցապատկան կալվածքներն ու հողերը-մշակութային արժեքները՝ որպես իրավատիրոջ: Սա բավականին լուրջ հայտ է նաև միջազգային իրավունքի տեսանկյունից, և թուրքիայի համար դժվար կլինի վիճարկել իր երկրի տարածքում ներկայումս գտնվող հայկական մշակութային արժեքների պատկանելությունը: Չշտապենք, սակայն, հետևություններ անել, այլ շարունակաբար փորձենք գտնել այն ուղղակի սլաքները, որոնք մեզ քայլ առ քայլ կմոտեցնեն մեր պահանջատիրության ամբողջական լուծմանը, լինի դա 2015 թվականին, թե ավելի ուշ: Ցեղասպանությունը վաղեմության ժամկետ չունի, իսկ պատմական հայրենիքը վերադարձնելու խնդիրը ժամանակային կաղապարներ չի բովանդակում:

Գուցե համեմատությունը շատ չէ տեղին, բայց ավելորդ չենք համարում հիշեցնել՝ նույն հրեաներն իրենց նախնայաց հողին սկսել են վերստին տիրություն անել... շուրջ մեկուկես հազարամյակ հետո:

« ԼՈՒՍԱՐԱՐ »

ԱՆՅՅԱԼՆ ԱՂՄԿՈՒՄ Է, ՆԵՐԿԱՆ ՊԱՏԱՆՋՈՒՄ



Ապրիլի 24-ը ամեն տարի խորին ցավով են հիշում ոչ միայն հայերը, այլև աշխարհի առաջադեմ մարդկությունը, և շուրջ երկու տասնյակ պետություն ընդունել է այդ փաստը որպես ցեղասպանություն, սակայն միայն հայ ժողովուրդը կարող է աշխարհին ներկայացնել իր ցավը, և մենք պարտավոր ենք սերնդեսերունդ փոխանցել հայերի նկատմամբ Օսմանյան թուրքիայի կողմից իրականացված ոճրագործությունը և հիշել մեկուկես միլիոն անմեղ զոհերին:

Արդեն 98 տարի է՝ հայ ժողովուրդը դարի ճակատին խարանված ցեղասպանության դրոշմն է ուզում վերացնել, որպեսզի ոչ մի ժողովուրդ այլևս եղեռն չտեսնի:

Հայոց մեծ եղեռնի 98-րդ տարելիցը առանձնահատուկ բովանդակությամբ նշեց Ստեփանակերտի Հովի. Թումանյանի անվան հ.9 դպրոցը, որը կազմակերպել էր դպրոցի փոխտնօրեն Արմինե Հայրապետյան-
3

ԱՊՐԻԼ, ԱՊՐԵԼՈՒ ԱՊՐԻԼ

Արմախում թուրքն ուզեց իր պատմության էջում ապրիլ ամիսն ունենալ իր համար մեծ հաղթանակի, ձեռքբերումի հիշարժան ամիս, բայց չգիտեր, որ Աստուծո ստեղծած զավակների այս տեսակը, որին հայ էր կոչել, աշխարհ է եկել ապրելու, արարելու, հավերժանալու համար:

Պատահական չէ, որ ես՝ այսօրվա քարվաճառեցի, հենց ապրիլի մեկին մեծ շուքով պիտի նշեմ օտարին արիեստականորեն բաժին տրված իմ պապերի հողի ազատագրման 20 տարին:

Պիտի վկան ու ակնադատը լինեն տարածքը շենացող, լուսավորող և խաղաղությունը հսկող հայի մեծարման այն մեծ համընդունությունների, որ տեղի էին ունենում աշ-

խարհի այս գոլտրիկ, հրաշք բնություն ու լուսավոր ապագա ունեցող անկյունում օրեր շարունակ՝ մեկը մյուսից հոգեկոչող ու հոգի հպարտությամբ լցնող: Ավելին ասեմ, այդ նույն թուրքը՝ լկտի, ստախոս, չէր կարող պատկերացնել, որ քսանամյա այդ հողի վրա մեծացող երիտասարդը մի օր երթի պիտի դուրս գա ու ոտքով Արցախի սարերով հասնի երևան, Ծիծեռնակաբերդ՝ իր խոնարհումը բերելու անմեղ նահատակ-



ների հիշատակին և ասելու՝ ժամն է հատուցման:

Պատմությունը չեն հորինում, պատմությունը կերտում են, և մեր տղաները՝ Եփրեմյան Սերգեյ, Մարտիրոսյան Հարություն, Փիլոսյան Միք, Փիլոսյան Դավիթ, առաջին քարը դրեցին: Միանալով նրանց կոչին՝ կրկնում ենք. «Արցախը դատապարտում է ոճրագործներին»:

Արցախն իր հողի վրա նոր ուխտատեղիներ է հիմնում՝ 1,5 մլն նահատակ իր հայրենակիցների հիշատակը հավերժացնելու և խնկարկելու: Ին քաղաքում ևս այդ օրը մի նոր սրբատեղի հիմնվեց՝ լրացնելով հինն և իր մեջ մեծ խորհուրդ ամենելով: Թող միսիթարվեն անմեղ նահատակների հոգիները և խաղաղվեն, քանի որ աշխարհն է սգում:

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
ք. Քարվաճառ

ՕՐԱԳԻՐ

ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ԲԱՎԱՐԱՐ ԵՆ

Ինչպես հայտնի է, ԼՂՀ գնահատման և թեստավորման կենտրոնը մարտի 6-15-ը հանրակրթական ուսումնական հաստատություններում անցկացրել է սովորողների արտաքին ընթացիկ գնահատում 5-րդ, 7-րդ, 8-րդ և 10-րդ դասարաններում, հետևյալ առարկաներից.

5-րդ դասարան - մայրենի, մաթեմատիկա, անգլերեն, ռուսաց լեզու

7-րդ դասարան - հայոց լեզու, հայոց պատմություն, քիմիա

8-րդ դասարան - երկրաչափություն, ֆիզիկա, աշխարհագրություն, կենսաբանություն

10-րդ դասարան՝ ավագ և հոսքային դպրոցներ - հայոց լեզու, հանրահաշիվ, հայոց պատմություն, ֆիզիկա, քիմիա, անգլերեն

10-րդ դասարան՝ ընդհանուր հոսք - հայոց լեզու, հանրահաշիվ, հայոց պատմություն, աշխարհագրություն, ռուսաց լեզու:

Արդյունքների մասին տեղեկացանք ԼՂՀ ԳԹԿ տնօրեն Յուրի Քարամյանից: Ինչպես միշտ, թեստերը մշակվել են ԳԹԿ-ում, քննարկումներն անց են կացվել մի քանի փուլով, վերջում՝ ԼՂՀ ԿԳՆ մասնագետների և ՀՀ ԳԹԿ փորձագետների հետ: Կարծիքները լրիվությամբ հաշվի են առնվել, որպեսզի թեստերը համապատասխանեն չափորոշիչներին: Ստուգվել է 600 դասարան՝ 4395 աշակերտի ընդգրկմամբ: Գրավորները ստուգվել են ԳԹԿ-ում, բայց ինչպես նախորդ անգամ, գրավոր աշխատանքների կատարման ժամանակ վերահսկողությունը մեծամասամբ իրականացրել են դպրոցները: 600 դասարանից միայն 13-ում վերահսկողությունը կատարվել է և՛ դպրոցի, և՛ ԳԹԿ ներկայացուցիչների կողմից: Փորձը ցույց է տվել, որ 90-ից ավել տոկոսով պահպանվել է կարգը, խախտումներ չեն եղել: Ամեն անգամ այս գործընթացին անդրադառնալիս ԳԹԿ տնօրենը շեշտում է այն միտքը, որ այլևս իմաստ չկա խախտել կարգը. գրավորների ստուգման ժամանակ պարզ երևում է, թե որ դպրոցն է խախտում կատարել, կերպերը: ԳԹԿ տնօրենը ասաց, որ արդյունքները դպրոցներ ուղարկելիս կատարում է համապատասխան նշումներ խախտման վերաբերյալ, ինչպես նաև գանգում, տնօրենի ուղարկությունը իրավիճակ այդ հարցին ու հետևում, որ նա դրանից հետևություն անի: Անշուշտ, դա տնօրենի, աշակերտի, ծնողի օգտին է կատարվում, որպեսզի իմացվի աշակերտի գիտելիքների իրական մակարդակը: Փոքրիկ թերությունները միայն այս՝ կազմակերպչական մասով էին:

Իսկ արդյունքներն այսպիսի պատկեր ունեն. ընդհանրապես, տարվա սկզբում՝ առաջին կիսամյակում տրված գրավոր աշխատանքները միշտ ավելի ցածր արդյունքներ են ունենում, քան երկրորդ կիսամյակում: Այս ընդհանրական եզրահանգումն արեց ԳԹԿ տնօրենը՝ Ելնելով նաև նախորդ տարիների փորձից: Նրա կարծիքով՝ դա բացառվում է նրանով, որ առաջին ստուգումից հետո, ինչպես հրահանգով պահանջվում է, արդյունքները վերլուծվում են մանկավարժական ժողովներում, ի գիտությունը ընդունվում, ուսումնական տարվա ընթացքում աշխատանքներ իրականացվում թերությունների վերացման ուղղությամբ, և 2-3 ամիս հետո նույն ձևի առաջադրանք ստանալով՝ ավելի ուշադիր են լինում, ինչն իր արտացոլումն է գտնում արդյունքներում: Յու. Քարամյանի տեսակետով՝ ընդհանրապես, դա ծավալում աշխատանք է ուսուցիչների կողմից, ոչ թե թեմատիկ ստուգում 10-20 օր կամ մեկ ամիս առաջ անցած: Դա ստուգում է սեպտեմբերի 1-ից մինչև փետրվարի 20-ն ընկած ժամանակահատվածում անցկացված առարկայական նյութերի վերաբերյալ: Ուսուցիչը պետք է կրկնի այդ ամբողջ ժամանակահատվածի նյութերը: Բողոքներ մեկ-երկուսն են եղել, այս էլ՝ անհիմն: Ասել են՝ ինչու վերջին թեմաների վրա չեն ուշադրությունը դարձրել: ԳԹԿ տնօրենի խոսքով՝ նման բողոքներ ընդհանրապես չպետք է լինեն. չէ՞ որ երբ դպրոցներից գրավոր տեղեկացում են արտաքին ընթացիկ ստուգումների մասին, նշվում է, որ թեստերն ընդգրկելու են սեպտեմբերից մինչև փետրվարն անցած թեմաները: Եվ երբ մեթոդիկ վորումներում ԳԹԿ-ի կողմից քննարկվում է թեստի բովանդակությունը, հաշվի է առնվում թեմաների կարևորությունը, որպեսզի աշակերտն իմանա, թե որ ուսումնական

տարվա ընթացքում անցած նյութից է լինելու:

Արդյունքներն, ընդհանրապես, Յու. Քարամյանը բավարար է համարում, իսկ 5-րդ դասարանում՝ մայրենի, մաթեմատիկա առարկաներից՝ լավ: Առաջին անգամ է 5-րդ դասարանում մայրենիից արտաքին ընթացիկ ստուգում անցկացվում: Անցյալ տարի միայն մաթեմատիկայից են անցկացրել՝ 2-րդ կիսամյակում, որպեսզի համեմատեն արդյունքները: 2011-ին, եթե հիշում ենք, մաթեմատիկայի արդյունքները վատ էին, անբավարար էր 37%-ը, 2012-ին՝ 23%-ը, 2013-ին՝ 13%-ը: «Արդեն եկել ենք այն վիճակին, որ կարելի է ասել՝ արդյունքները մեզ բավարարում են, չենք ատում՝ լավ են, բայց հիմնականում նորմալ են: Գերազանցների քանակը 4%-ից բարձրացել է մինչև 9%: Դա էլ է նորմալ, բայց դեռ լավ չէ: 25-ից մինչև 35% է բարձրացել լավերի քանակը. աճը՝ 10%», - ասաց նա: Բայց գոհացուցիչ չի համարում անգլերենի արդյունքները, անբավարար է 35%-ը, գերազանց՝ 4%: Անգլերենից գրավոր միշտ տալիս էին՝ սկսած 6-րդ դասարանից, այս անգամ՝ 5-րդից: Առաջին տարին լինելու հանգամանքն իր ազդեցությունը թողել է: Յու. Քարամյանի խոսքով՝ միշտ էլ դա նկատվել է. «Յուրաքանչյուր տարի ստուգվող առարկաների քանակն այդպես ավելացնելով՝ ձգտում ենք բոլոր առարկաների մակարդակը ստուգել»:

7-րդ դասարանում անցկացված ստուգումն այս արդյունքներն է արձանագրել. հայոց լեզու, քիմիա առարկաներից անբավարարների քանակը 26% է, գերազանց՝ 1%: Անցյալ տարի հայոց լեզվից անբավարարը 31% էր, այս տարի 5%-ով վիճակը բարելավվել է: Արդյունքները վատ են հայոց պատմությունում առարկայից. անբավարար՝ 53% (ընդհանրապես, եթե 50%-ից ավելանում է, վատ արդյունք է կոչվում), լավ՝ 7%, գերազանց ընդհանրապես չկա: Այնուամենայնիվ, այստեղ էլ կա առաջընթաց՝ նախորդ տարվա համեմատ. - անբավարարների քանակը նվազել է 9%-ով:

8-րդ դասարան. երկրաչափություն, ֆիզիկա, աշխարհագրություն առարկաներից անբավարարների քանակը 25-32% է: Հասկանալի է, որ նման ցուցանիշը բավարար համարել չի կարելի, բայց հաշվի առնելով նախորդ տարիների արդյունքները, նկատում ենք, որ առաջընթաց կա: Հիշենք 2012 թվականը, երբ առաջին անգամ էր արտաքին գնահատում իրականացվում երկրաչափությունից. անբավարարների քանակը 55% էր, հիմա 24% է: Լավը 5% է եղել, հիմա՝ 30%: «Ճիշտ է, երկրաչափությունից հատուկ ցուցում է տվել մասնագետին, որպեսզի միջին մակարդակից ցածր լինեն որոշ առաջադրանքներ, պարզ առաջադրանքների քանակը ավելացրել ենք: Կարող է՝ դրանից է նախորդ տարվա համեմատ անբավարարների քիչ լինելը: Ընդհանրապես, երկրաչափությունից թույլ են մեզ մտն: Մեր նպատակն էր ոչ թե իմանալ անբավարարների թիվը (լավ և գերազանցների քանակը պահպանվում է), այլ՝ որպեսզի սովորողների մոտ հետաքրքրություն առաջանա երկրաչափությունում առարկայի նկատմամբ: Հետագայում էլի կդնենք նույն չափորոշիչները», - պարզաբանեց Յու. Քարամյանը:

Ֆիզիկայից անբավարարների քանակը նախորդ տարի կազմել է 35%, հիմա՝ 25%, լավը եղել է 7%, հիմա՝ 10%: Գերազանցների քանակը նույնն է նախորդ տարիներին և հիմա: 600 ստուգված աշխատանքներից հազիվ մեկը լինի գերազանց: Իսկ որոշ առարկաներից ընդհանրապես չկա: «Դա մնում է մեր ցավոտ հարցը», - ասաց ԳԹԿ տնօրենը:

Ընդհանուր հոսքով 10-րդ դասարանում բոլոր առարկաներից արդյունքները հիմնականում եղել են հավասար: Անբավարարների քանակը՝ 26-35%, լավ՝ 10-20%, գերազանց՝ 1%: Արդյունքները համեմատաբար լավ են հայոց և ռուսաց լեզուներից, բայց գոհացուցիչ չեն (ոչ թե վատ) հայոց պատմությունում, աշխարհագրությունում առարկաներից: «Հայոց պատմությունը՝ վերջերս մեր ցավն է դարձել: Չեն կարող պատճառներն ասել. կան չափորոշիչներն են, որ պահանջում է բոլոր թվերը իրիչ, կան՝ ծրագրերը: Գուցե փոփոխություններ կատարվեն՝ փոխվի վիճակը», - նման տեսակետ հայտնեց Յու. Քարամյանը:

Խորացված ուսուցմամբ 10-րդ դասարան

ում (նրանց թեստերը տարբեր են) 461 ստուգվածներից անբավարար է ստացել 18%-ը (այս ցուցանիշը շարունակ պահպանվում է). «Ուրեմն՝ ավագ դպրոցը լիարժեք չի կատարում ընտրությունը: Ավագ դպրոցն ընդհանրապես անբավարարներ չպետք է ունենա: Դեռ աշակերտների 20-30%-ը չէ, որ գնում է ավագ դպրոց, այլ մի քիչ ավելին, դրա համար էլ ցածր ցուցանիշները պահպանվում են: Միջին մասնագիտությունների ցանկը պետք է բազմազան լինի, որ սովորողների մոտ շահագրգռություն լինի այդ հաստատությունները գնալ, և այդ դեպքում ավագ դպրոց կգնա պահանջվող քանակությունը», - այս կարծիքին է նա:

Համեմատաբար լավ են արդյունքները հայոց լեզվից, բարելավվել է հայոց պատմության վիճակը (հավանաբար, դեր են խաղում լրացուցիչ պարապմունքները): Նույն ձևով՝ հանրահաշիվ, անգլերեն առարկաները: Բայց դարձյալ ֆիզիկայից, քիմիայից արդյունքները գոհացուցիչ չեն. անբավարար՝ 33% և 73%, գերազանց՝ 1%: Սա դարձյալ ցավալի է համարում ԳԹԿ տնօրենը՝ ասելով, որ մինչև 10% գերազանցներ պետք է լինեն այստեղ:

Անբավարարների միջին քանակը ավագ և միջնակարգ դպրոցներում պահպանվում է: «Պետք է մի բան անել, որ պատկերը փոխվի: Պետք է սկսել առաջադիմության բարձրացումից, որ որակ լինի», - այսպես է մտածում ԳԹԿ տնօրենը: Միջին օղակում անբավարարները 30% են, կա, որ 50%-ից բարձր են: «Միջին օղակում անբավարարներ միշտ էլ լինելու են: Բայց եթե 10-20% լինի, հասկանալի կլինի: Նույնքան էլ գերազանցներ պետք է լինեն: Ընդհանրապես, վատերը և գերազանցները պետք է հավասար լինեն: Օրինաչափությունը դա է: Բայց մի դեպքում ունենք 30%, մյուս դեպքում՝ 1%: Լավերի և գերազանցների քանակը պետք է համաչափ լինի: Լավն էլ շատ չէ՝ 15-20%», - մտախոհություն է հայտնում համակարգի գլխավոր վերլուծաբանը՝ գտնելով, որ հետազոտություն պետք է կատարել, հարցեր պարզել: Կրկնուսուցումը սկսված է առաջին դասարանից. դա անընդունելի է: Կրկնուսուցումը միշտ էլ լինելու է, բայց՝ բարձր դասարաններում: «Համոզված եմ, որ ավագ դպրոցը հայտնելով, որ այս հարցերը կլուծվեն, երբ միասնական քննությունները վերացվեն, դպրոցն իրական գնահատականները նշանակի: Ցանկացած օղակում ընդունելությունը լինի առանց քննությունների: Բայց, հավանաբար, դա այն ժամանակ կլինի, երբ դպրոցի գլխավոր նպատակը բոլոր ընդունվելը չլինի, կան էլ մեզանում բոլոր մասնագիտություններով (անգամ եթե դիմողը գրեթե չի լինում) բուհական ընդունելություն կազմակերպելը: Սա՝ իմիջիայլոց:

Այսպիսով, բոլոր ստուգված աշակերտներից՝ 4395 հոգի, անբավարար են ստացել 24%-ը, բավարար՝ 50%, լավ՝ 23%, գերազանց՝ 3%: Ստեփանակերտ քաղաքում և շրջաններում համամասնությունը պահպանվել է՝ բացի Հաղորոթի և Քաջաբաղի շրջաններից: Այստեղ մի քանի դպրոցներում կարգը խախտել է: Կողմնորոշիչը Ստեփանակերտ քաղաքում է, որը լրիվությամբ վերահսկվել է ԳԹԿ-ի կողմից, և անբավարարների քանակը կազմել է 28% (հանրապետությունում միջինը՝ 24%, բավարար՝ 48% (միջինը՝ 50%), լավ՝ 21% (միջինը՝ 23%), գերազանց՝ 3% (միջինը՝ 3%): Այստեղից երևում է, որ խախտումներն այնքան քիչ են եղել, որ ընդհանուր մակարդակի վրա չեն ազդել: Եվ ինչն այդ հանգամանքից ելնելով էլ ԳԹԿ տնօրենը համոզված ասում է, որ արդյունավետ աշխատանք է կատարվել: «Կարգը խախտած մի քանի դպրոցներ եղանակ չեն ստեղծել: Այսօր ավելի շատ ուրախ են դրա համար՝ որ դպրոցների տնօրենները կարողանում են արդյունքներով իմանալ իրական մակարդակն ըստ պետական չափորոշիչների: Ուսուցիչը ոչ միշտ է շահագրգռված այդ հարցով: Թեկուզ ամենից ճիշտը ուսուցիչն է իմանում, բայց չի ուզում ցույց տալ, որ իր մոտ այդ վիճակն է», - ասում է մանկավարժների հոգեբանությանը քաջատեղյակ Յու. Քարամյանը՝ վերջում վկայակոչելով մեկ փաստ ևս. աշակերտների 8%-ն է բացակա եղել արտաքին ընթացիկ գնահատումից, ինչը նույնպես նորմալ է:

Ս. ԽԱՉԱՏՐՅԱՆ

Շնորհավորում ենք

ՄԵՐ ՎԱՍՏԱԿԱՆԱՏ ՀՈՐԵԼՅԱՐԸ



Ա շ խ ա տ ա ս ե ր մարդը միշտ կարծում է, որ իր աշխատանքը տակավին ավարտված չէ:

Պուրլիկոս Սիրոս

Լրացավ Ստեփանակերտի քաղաքապետարանի աշխատակազմի կրթության և սպորտի բաժնի պետ Կառլեն

Մարգարյանի ծննդյան 60-ամյակը: Հոբելյանի առթիվ Կ. Մարգարյանը ստացել է բազմաթիվ շնորհավորանքներ, ջերմ խոսքեր, որոնց, արդարև, արժանի է նա. մարդ, ով իր գիտակցական կյանքի մեծ մասն անմնացորդ նվիրել է կրթական գործին:

Նրա մարդկային արժանապատվությունը, պահանջկոտությունն ու աշխատանքային կարգապահությունը նոր եռանդ են հաղորդում ողջ աշխատախմբին: Նրան սիրում ու հարգում են ոչ միայն ճանաչող մանկավարժները, այլև նրանք, ովքեր առաջին անգամ են հանդիպում... Նրա փառաբանող հայացքը թափանցում է յուրաքանչյուր մանկավարժի և աշակերտի սրտի խորքը:

Ծնվել է 1953թ. ապրիլի 27-ին, Ասկերանի շրջանի Ազնեբ գյուղում, բազմազավակ ընտանիքում: Նախնական կրթությունը ստացել է ծննդավայրի 8-ամյա դպրոցում, միջնակարգ կրթությունը՝ Ստեփանակերտի մաթեմատիկական թեթևակազմի դպրոցում:

1971թ. ընդունվել է Բաքվի մանկավարժական ինստիտուտի Ստեփանակերտի մասնաճյուղի լեզվագրական ֆակուլտետը և ստացել հայոց լեզվի և գրականության ուսուցչի որակավորում:

1975-84թթ. աշխատել է Ազնեբ գյուղի 8-ամյա, իսկ հետո՝ նույն շրջանի Կարմիր գյուղի միջնակարգ դպրոցում՝ որպես մայրենիի ուսուցիչ:

1984-89թթ. աշխատել է Ասկերանի կրթության շրջանային բաժնում, նախ՝ դպրոցական տեսուչի, հետո՝ մեթոդկաթիների վարիչի պաշտոններում: 1989-94թթ. աշխատել է Ստեփանակերտի կրթության քաղաքային բաժնում՝ որպես մեթոդկաթիների վարիչ, այնուհետև՝ բաժնի վարիչի տեղակալ: 1994-95թթ. ծառայել է ԼՂՀ ՊԲ շարքերում: 1995-97թթ. աշխատել է ԼՂՀ կրթության և գիտության նախարարությունում՝ որպես առաջատար մասնագետ:

1997թ. հունվարից Ստեփանակերտի քաղաքապետարանի կրթության և սպորտի բաժնի պետն է:

Ամուսնացած է: Ունի երեք երեխա:

Կրթության նվիրյալի բարեխիղճ աշխատանքը գնահատվել է ըստ արժանվույն: Կրթության բնագավառում կատարած գործունեության և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հռչակման 11-րդ տարեբարձի կապակցությամբ 2002թ. սեպտեմբերի 2-ին պարգևատրվել է «Վաչագան Բարեպաշտ» մեդալով: Արժանացել է նաև ԼՂՀ արհմիությունների ֆեդերացիայի (2011թ.), ԼՂՀ անհայտ կորած ազատամարտիկների հարազատների միության «Հայրենիք և հավատ» (2012թ.), ՀՀ ՊՆ «ՀՀ զինված ուժեր 20 տարի» (2012թ.) մեդալներին, կրթության, մշակույթի և սպորտի նախարարության պատվոգրի---

2011թ. ԼՂՀ նախագահի հրամանագրով արժանացել է «ԼՂՀ վաստակավոր մանկավարժ» պատվավոր կոչման:

Ստեփանակերտի քաղաքապետարանի կրթության և սպորտի բաժնի աշխատախումբն ի սրտե շնորհավորում է Կառլեն Մարգարյանին՝ վաստակաշատ մանկավարժին, կրթության ամխոնը մշակին, լավ ընկերոջն ու խորհրդատուին, ցանկանում անսպառ եռանդ աշխատանքային գործունեության մեջ, ստեղծագործական ու մասնագիտական նոր նվաճումներ, քաջառողջություն, երջանկություն ընտանեկան կյանքում:

Ստեփանակերտի քաղաքապետարանի աշխատակազմի կրթության և սպորտի բաժնի

ԱՌԱՆՑ ՎԱՂԵՍՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԻ

ԲԱՅՆԱՄԱԿ ՄԻԶԱՉՈՒՄԻ ԶԱՆՐՈՒԹՅԱՆԸ ԵՎ ԱՆԽԱՐՀԻ ԲՈՒՈՐ ԲԱՐԻ ԿԱՄՔԻ ՏԵՐ ՄԱՐԴՎԱՆՅՈՒՄ

Հայոց դատը մարդկության դատն է: Աշխարհը պիտի սուրբ դատ պահանջի... Հայ ժողովուրդը ապրիլի 24-ը դիմավորում է հակադիր զգացմունքներով՝ ցավով ու հայարտությամբ, որոնք միմյանց չեն մերժում: Ցավով, որ ունեցել է նման ողբերգական էջ և հայարտությամբ, որ բռնել է հավերժի ճամփան...

Կյանքի անողոք պայքարում, մաքառումներով լի ճանապարհին գոյատևում է այն ազգը, որն ունի ազգային հիշողություն: Հիշողությունը հարություն է տալիս ազգի պատմական անցյալին՝ լինի դա հերոսական, թե ողբերգական:

Ազգային հիշողությունը չունեցող ազգը մահվան է դատարարված:

Ապրիլի 24-ին մենք ազգովի նշեցինք 20-րդ դարի՝ մարդկության պատմության ամենամեծ ողբերգության՝ Հայոց ցեղասպանության 98-րդ տարելիցը:

Ցավով պետք է նշել, որ 98 երկար ու ձիգ տարիների ընթացքում դեռ աշխարհի 21 երկրներն են իրենց մեջ ուժ գտել ու իրենց արդարացի վերաբերմունքը դրսևորել այդ ոճրագործության հանդեպ՝ ճանաչելով Հայոց մեծ եղեռնը՝ որպես այդպիսին:

«Ղարաբաղի կանանց ասոցիացիա» հասարակական կազմակերպության անդամների և անձամբ իմ երախտագիտության խոսքն են ուղղում նշված երկրների իշխանություններին, այդ երկրների հասարակությանը, ողջունում նրանց յուրօրինակ խիզախումը՝ աշխարհի որոշ մեծ տերությունների՝ այդ հարցում անտարբեր կեցվածքը շրջանցելու հանգամանքով:

Միաժամանակ կոչ ենք անում միջազգային հանրությանը, բոլոր բարի կամքի տեր մարդկանց, ինչու չէ, նաև թուրքիային (չէ՞ որ նա երբևէ ստիպված կլինի մաքրվել այդ ախտից), ցեղասպանությունը չճանաչած բոլոր երկրներին, անկախ նրանց աշխարհաքաղաքական շահերից, իրենց մեջ ուժ գտնեն և պատմականորեն անհերքելի այդ ճշմարտությունը չշրջանցեն, չաղավաղեն, այլ՝ ճանաչեն, որպեսզի մարդկությունը այսօր և հետագայում փրկվի նմանօրինակ և այլ ողբերգություններից:

Եվ եթե ժողովուրդների համաշխարհային ընտանիքում միջազգային հանրությունը ժամանակին դատապարտեր և քաղաքական գնահատական տար Հայոց մեծ եղեռնին, որի անմարդկային, ցարժեք, գործեց նաև Նախիջևանում, Սումգայիթում, Բաքվում, Կիրովաբադում, Մինգչաուրում, ապա չարագործներն իրապես կվախենային պատմության դատաստանից ու երբեք նման և այլ հանցագործությունների ձեռք չէին մեկնի:

Ավելալուծ ենք ձեր ողջամտությունն ու արդարացի վերաբերմունքը:

Ն. ՆԱԼԲԱՆՅԱՆ
«Ղարաբաղի կանանց ասոցիացիա»
հասարակական կազմակերպության
նախագահ

ՔՈՒՃԻՐԸ ԱՆՆԵՐԵԼԻ Է, ԹՈՒՐՔԻԱ՝

Ստրկացված անցյալի սևավոր մի էջ, որ խառնվել է հոգուս ապշահար ներկային ու ճշուն է՝ վերականգնել արդարությունը:

Ապրիլի 24... Հոգուս տխուր թանգարանն այսօր լեզու է առել ու չի ուզում լռել:

Մարդուն կյանքից զրկելու իրավունք ունի միայն Աստված, բայց երիտթուրքական կառավարությունը, որպես մութ անկյունում դավող սարդ, իր անտեսանելի, թունավոր սարդոստայն էր գործում մի անմեղ ժողովրդի շուրջ, որը միայն նպատակ ուներ իր սեփական հայրենիքում ապրել ու արարել, այլ ոչ թե անմեղ զոհերի արյան գնով տարածքներ զավթել, որի վառ օրինակն է Թուրքիան:

«Միություն և առաջադիմություն»։ Նրանց խոստացած ծրագրերն, ավաղ, խաբկանք էին. հայերը՝ խաբված, այնինչ իթթիհատական կառավարությունը սկսում էր իր արյունախումբ ժանիքները ցուցադրել:

Մեզմիջ և ոչ մեկը չի կարող զգալ ու պատկերացնել 1915թ. հայերի անցած՝ տասնակով լի աքսորի ճամփան:

Նրանք գալիս էին Երզրումից, Վանից, Տարսուզից, Ուրֆայից, Շապին-Պարահիսարից ու գնում նատաղվելու անհայտության մեջ:

Սկզբից զինաթափեցին հայ տղամարդկանց և զնդակահարեցին, ապա ձերբակալեցին մտավորականներին, կրոնական ղեկավարներին, քաղաքական գործիչներին:

«Genocide»։ այս հասկացությունը առաջին անգամ գործածվեց 1944թ. Լեմկինի հրատարակած ուսումնասիրության մեջ:

Մեկ ու կես միլիոն հայեր և գուցե ավելին...

Մի գիշերում փլվեցին հայ գրականության տաճարի սյուները, մի գիշերվա մեջ 600 մտավորականներ մարեցին...

Մենք դեռ եղեռն ունենք ապացուցելու: Թուրքիա, մեկ է, դու մի օր պետք է ընդունես դառն իրականությունը, դու պե՛տք է գիտակցես, որ այս հողի ամեն մի քարը խոսում վկան է անմեղ զոհերի:

Պատմական անարդարությունը ամեն վայրկյան վերանայվում է, Թուրքիա՛, այն դաջված է յուրաքանչյուրիս ճակատին:

Մենք պետք է պայքարենք, որ Թուրքիան այսօր չփորձի հավատացնել, թե կատարվածը պատերազմի արդյունք էր, և պատահական էին կոտորածները: Բայց պատահական էր, արդյոք, Թալեթի գաղտնի հեռագիրը՝ հղած Հալեպի կառավարչին, հայ գաղթականությանը կոտորելու, սովամահության մատնելու, ողջակիզելու, գնդակահարելու ցուցումները: Եթե այո, ապա ինչո՞ւ Ղեր էլ Ջորը դարձավ հայերի ցեղասպանության խորհրդանիշը, ինչո՞ւ որոշ երկրներ Ցեղասպանություն են համարում քո հանցավոր արարքը, Թուրքիա: Մեր սրբազան նպատակն հասնելու համար պետք է շտապել, մեր միացող վերքերը մեզ առաջ են մղում՝ ապացուցելու աշխարհին և Թուրքիային ստիպելու՝ ընդունել, որ իր հանցագործ քայլը հայերի նկատմամբ կանխամտածված բնաջնջում էր:

Ռուզաննա ԱՆՆԱՎԵՐԳՅԱՆ
Շահումյանի շք. Նոր
Ղարաջինարի միջև. դպրոցի
պնորեն

ԱՆՑՅԱՆ ԱՂՄԿՈՒՄ Է, ՆԵՐՎԱՆ ՊԱՆԱՆՋՈՒՄ

1 Քիչ է ասել, թե գրական-գեղարվեստական կոմպոզիցիա էր դա: Խոսքի, երգի, երաժշտության, պարի մի հիանալի համաձվագ, որն առանց հուզվելու անհնար էր նայել: Միայն տեսնել էր պետք, թե ինչ ոգեշնչանքով ու հայրենասիրական զգացումով արտասանեցին, երգեցին ու պարեցին միջոցառման մասնակից աշակերտները: Այս ամենը եկան ապացուցելու, որ չեն մոռացվել ոչ մեր նկատմամբ կատարված ոճիրը, ոչ էլ մեր անմեղ զոհերը: Տիկին Հայրապետյանը իր ելույթում նշեց, որ հաշվի առնելով, որ աշակերտներից շատերը չեն եղել Ծիծեռնակաբերդում, տքնաջան աշխատանքի շնորհիվ բեմում կանգնեցրել է այդ հուշակոթողը...

Այն բարձր գնահատական ստացավ ներկաներից՝ մայրաքաղաքի բոլոր դպրոցների փոխտնօրենների և քաղաքապետարանի կրթության բաժնի գլխավոր մասնագետ Գ. Գրիգորյանի կողմից: Այն արժևորեց և միջոցառման մասնակիցներին ու կազմակերպչին շնորհակալություն հայտնեց դպրոցի տնօրեն Ա. Անտոնյանը: Մեկ անգամ ևս եկանք այն եզրակացության, որ այսպիսի միջոցառումները ոգեշնչում են հայ ժողովր-

դին արարելու, չվիատվելու և ազգովի Արարատի շուրջը «Քուչարի» պարելու:

Ա. ՄԵՏՐՈՊՅԱՆ

ԾԻԾԵՐՆԱԿԱՆՔԻ ԲԱԿՈՒՄ

Սա Հայաստան է, և վերջ...
Լեոնիդ Ազգալոյան

Այսօրվա Քաջաթաղի շրջանում, հատկապես հյուսիսային մասում, որն է՝ Մեծ Հայքի նահանգներ Սյունիքի Աղահեճք-Քաջաթաղ և Վրցախի Վայկունիք, Մաղավուզ և այլ պատմական գավառները, կան մի քանի տասնյակ հնադարյան վանքեր, եկեղեցիներ, մատուռներ, հարյուրավոր խաչքարեր, տապանաքարեր, այլ հուշարձաններ: Ցավով պետք է ասել, որ գրեթե բոլոր սրբատեղիների վիճակը տագնապ է հնչեցնում, որ վաղը կարող են քանդվել: Այս առումով արդեն բարվոք վիճակում է Ծիծեռնակավանքը, որը տարածքի ազատագրումից հետո հիմնովին նորոգվել է: Վերջերս ԼՂՀ ԿԱ զբոսաշրջության և պատմական միջավայրի պահպանության վարչության Քաջաթաղի տարածքային ծառայության կողմից կազմակերպվեցին Ծիծեռնակավանքի (4-րդ դար) տարածքի մաքրման և բարեկարգման աշխատանքներ:

Վանական համալիրի տարածքի բարեկարգման կարևոր գործում մասնակից եղան համայնքում գործող 2 դպրոցների՝ Ծիծեռնակավանքի Վարազ Առաքելյանի անվան, որտեղ սովորում են նաև Մելիքաշեն գյուղի դպրոցականները և Տանձուտի դպրոցների ուսուցիչներն ու աշակերտները: Վարազ Առաքելյանի



անվան դպրոցը հիմնվել է 1995թ. հոկտեմբերին (առաջին տնօրեն՝ Մ. Մկրտչյան), անվանակոչվել 2002-ին: Տարածքի առաջին կրթօջախներից է: Այժմ ունի 24 աշակերտ՝ 7 դասարան-կոմպլեկտով, 14 ուսուցիչ: Տանձուտ (նախկինում՝ Քաջաթաղ) գյուղի դպրոցը գործում է 1994-ից: Սկզբում սպասարկում էր տարածքի մի քանի վերաբնակեցված բնակա-

վայրերի: Այժմ ունի 14 աշակերտ: Ծիծեռնակավանքի Սուրբ Գևորգ եռանակ բազիլիկի և թանգարանի հիմնամորթումից հետո տաճարի մոտ նաև աղբյուր տեղադրվեց, սակայն վերջերս ջրի մատակարարումը խախտվել էր: Ծիծեռնակավանքի համայնքի նորընտիր ղեկավար Սիմոն Հարությունյանի և բնակիչների աջակցությամբ նորից աղբյուրի ծորակից ջուրը հոսեց, և ավելի շատ ուրախացան երեխաները, որոնցից մեկը նույնիսկ փորձեց մտնել գուռի մեջ: Այնուհետև սկսվեց վանական համալիրի տարածքի մաքրման աշխատանքը: Ուրախալի է, որ լավ աշխատեցին աշակերտներն ու նաև նախադպրոցական երեխաները, որոնցից չորսն այս սեպտեմբերին կդառնան առաջին դասարանի: Ջրուցում են նրանց հետ. Նարինե Ջախարյանը որոշել է լավ սովորել և դառնալ բժշկուհի, Գառնիկ Գուլամյանը՝ երգիչ, Ալիսա Առաքելյանը՝ պարուհի, իսկ Յովհաննես Սրապիոնյանը ցանկանում է քահանա դառնալ ու այդ նպատակով պետք է լավ սովորի և ընդունվի հոգևոր ճեմարան: Իսկ Տանձուտի դպրոցի 3-րդ դասարանի Հերմինե Գալստյանը և 9-րդի Լուսինե Մազմանյանը ցանկանում են պարուհի դառնալ և երագում են պարի ուսուցիչ

ունենալ: 5-րդ դասարանի Հասմիկ Մուսայելյանը հաստատ է որոշել՝ դառնալ կարատեիստ, իսկ Ղավիթը՝ մեխանիկատոր: Բացի մաքրման ու բարեկարգման աշխատանքներից, ներկաները մոմեր վառեցին եկեղեցում, աշակերտներն այցելեցին տարածքում գործող թանգարան, ծանոթացան Ծիծեռնակավանքի պատմությանը: Վերջապես տարածքը բարեկարգվեց, մաքրվեց մացառներից, բացվեցին սրբավայրի բակի ծառերի փոսերը. այս ծառերից մեկը տնկել է ՀՀ նախկին վարչապետ, երջանակահիշատակ Անդրանիկ Մարգարյանը: Իհարկե, համեմատած մնացած սրբավայրերի հետ, Ծիծեռնակավանքի տարածքում միշտ էլ վիճակը բարվոք է:

Կատարված աշխատանքներից հետո Ծիծեռնակավանք և Տանձուտ գյուղերի միջև անցկացվեց մարզական մրցույթ: Մեծահասակներն առանձին մրցեցին, իսկ աշակերտներն՝ առանձին: Նման օրերին միշտ էլ հաղթում է բարեկամությունը. տարբեր դպրոցների աշակերտները ծանոթացան, ընկերացան միմյանց հետ: Օրն ավարտվեց բարի և աստօհաճ աշխատանքով, որին, բացի համայնքի բնակիչներից, մասնակից եղան պատմական միջավայրի պահպանության շրջանային ծառայության և «Մերան» թերթի աշխատողները: Ծառայության պետ Կարեն Հովհաննիսյանը տեղեկացրեց, որ նման 3 միջոցառումներ այլ սրբավայրերում ևս պետք է իրականացվեն այս տարվա ընթացքում:

Ջոհրաբ ԸՈՔՈՅԱՆ

«ԱՐԵՎԻԿԱ - 2013»

ՇԱՐՔՈՒՄ ՎԱՂՎԱ ԶԻՆՎՈՐՆ Է

Դպրոցականների շրջանում անցկացվող «Արծվիկ» ռազմամարզական խաղերը խորհրդային դպրոցի այն լավագույն ավանդույթներից են, որ շարունակվում են մինչև այսօր: Արցախյան պատերազմը ցույց տվեց, թե որքան կարևոր դեր է կատարել այն սերունդի մեջ ֆիզիկական, կամային հատկանիշներ և ռազմամարզական գիտելիքներ ու հմտություններ ձևավորելու գործում, երբ մեզ պարտադրված պատերազմում, մինչև կամոնավոր բանակ ստեղծելը պաշտպանական ջոկատներում մեր քաջորդիները (նրանք թվում և՛ աղջիկներ) զենքին ու ռազմատեխնիկային տիրապետելու, հրամանատարական տաղանդի օրինակներ էին ցուցաբերում, որոնցից շատերը դարձան հերոսացման վառ օրինակներ, բանակային գործի հմուտ կազմակերպիչներ: Անշուշտ, այդ ամենի սաղմերը դրվել են դպրոցում:

Այսօր էլ ռազմահայրենասիրական դաստիարակությունը ուսումնական հաստատությունների գլխավոր ուղղություններից մեկն է, որն իրականացվում է տարբեր ձևերով: Եվ դրանց մեջ կարևորներից մեկը մնում է «Արծվիկը»: Պատահական չէ, որ այն անցկացվում է պաշտպանության ու կրթության և գիտության նախարարությունների համատեղ նախաձեռնությամբ և մի շարք գերատեսչությունների՝ ԼՂՀ կառավարությանն առընթեր փրկարար ծառայության, սպորտի պետական կոմիտեի, Արցախի ազատամարտիկների միության ծրագրերի շրջանակներում:

Մայիսյան եռատոնի նախաշեմին և գարնանային զորակոչի շրջանում անցկացվող այս միջոցառումը նաև վաղվա զորակոչիկների պատրաստության աստիճանի յուրատեսակ ստուգատես է:

Ապրիլի 18-20-ն անցկացվեց «Արծվիկ» ռազմամարզական խաղերի հանրապետական փուլը: Հանրապետության բոլոր շրջանները ներկայացնող 8 թիմերն իրենց հմտություններն ու կարողությունները ցուցադրեցին շարային պատրաստություն, ավտոմատի ոչ լրիվ քանդում-հավաքում և պահեստատուփի լիցքավորում, հրաձգություն, քաղաքաշտպանություն, ֆիզիկական պատրաստություն մարզանքից: Երեք, որ թիմերը շրջանային (քաղաքային) փուլում հաղթողներն էին: Ստեփանակերտը ներկայացնում էր հ. 11 ավագ դպրոցը, Ասկերանի և Հաղթուրի շրջանները՝ շրջկենտրոնների միջնակարգ դպրոցները, Մարտակերտի շրջանը՝ Վանքի, Մարտունու շրջանը՝ Հերիերի միջնակարգ, Շուշիի շրջանը՝ Մուրացանի անվան ավագ, Քաշաթաղի շրջանը՝ Բերդորի հ. 2, Շահումյանի շրջանը՝ Քարվաճառի միջնակարգ դպրոցները: Ի դեպ, Շահումյանի շրջանը առաջին անգամ էր թիմ ներկայացնում «Արծվիկ»-ին: Յուրաքանչյուր ջոկում ընդգրկված էին 10-12-րդ դասարանների 6 տղային և 3 աղջիկներ:

Խաղերի մեկնարկը տրվեց սպարապետ Վազգեն Սարգսյանի անվան զորամասից: Բնականաբար, մասնակիցները նախ իրենց հարգանքի տուրքը մատուցեցին Սպարապետին՝ ծաղիկներ դնելով նրա հուշարձանին: Խաղերի գլխավոր մրցավար, ռազմամարզական վարժարանի տնօրեն, փոխգնդապետ Վահրամ Հակոբյանը զեկուցեց թիմերի պատրաստության մասին: ԼՂՀ ԿԳՆ ռազմահայրենասիրական, ֆիզիկական դաստիարակության և հասարակայնության հետ կապերի բաժնի վարիչ Վալերի Գրիգորյանը ռազմամարզական խաղերը համարեց յուրատեսակ տոն, քանզի դրանց պատրաստվում են ամբողջ տարվա ընթացքում և արդյունքը երևան համուտ այդ օրերին:

«Արծվիկ»-ներին ողջունեց Պաշտպանության նախարարության ռազմահայրենասիրական դաստիարակության և հասարակայնության հետ կապերի բաժնի պետ, գնդապետ Բարեղամ Մուրադյանը՝ ասելով, որ խաղի մասնակիցներն իրենց պատրաստությամբ կապահովեն վաղվա մեր ապագան, իրենց հոգու արիությանը, առողջ մարմնով կերտախավորեն մեր Պաշտպանության բանակի կայուն համալրումը:

Իր ողջույնի խոսքում ԼՂՀ կրթության և գիտության նախարար Սլավա Արոյանը, անդրադառնալով ռազմամարզական խաղերի պատմությանը մեր երկրում, կարևորեց նրանց դերը, որի արդյունքը զգացիմք Արցախյան պատերազմի տարիներին, երբ պայմանական մարտական խնդիրներ կատարած աշակերտ-աշա-

կերտուհիները հայրենիքի վտանգի պահին կամավորագրվեցին և իրենց գիտելիքներն ու հմտություններն օգտագործեցին ի շահ Արցախի ազատության: «Ես համոզված եմ, որ ձեզ-նից յուրաքանչյուր պարտավորված է ծառայել մեր Պաշտպանության բանակի շարքերում, իսկ առաջին նախապայմանը հենց այդ պատրաստվածության մակարդակն է: Ինչքան դուք դպրոցում խոր տիրապետեց այդ գիտելիքներին, այնքան ձեզ համար ծառայությունը հեշտ է լինելու», - ասաց նա:

Ռազմամարզական խաղերը նշված մրցածներով, եղանակային անբարենպաստ պայմաններում անցկացվեցին ինչպես վերը նշված, այնպես էլ «Ասպարեզ» ուսումնական զորամասերում, մի մասը՝ հ. 2 դպրոցում, իսկ սպորտային միջոցառումները՝ հանրապետական մարզադաշտում, որտեղ էլ ամփոփվեցին խաղերի արդյունքները, և կատարվեց փակման արարողությունը:

Խաղերի գլխավոր պատասխանատու, ԿԳՆ բաժնի պետ Վ. Գրիգորյանը շնորհավորեց և շնորհակալություն հայտնեց բոլոր թիմերին՝



2013թ. «Արծվիկ»-ները. առաջին պլանում՝ հաղթող հ. 11 ավագ դպրոցի ջոկը:

խաղերի բարեհաջող ավարտի կապակցությամբ՝ ասելով, որ նման ցուրտ ու անձրևոտ եղանակային պայմաններում թիմերը պատվով կատարեցին առաջադրանքները, ապացուցելով, որ իրավունք ունեն ապագա զինվոր կոչվելու: «Պարտվողներ չեն եղել, հաղթել է վաղվա զինվորը», - ասաց նա:

Պաշտպանության նախարարության ռազմահայրենասիրական դաստիարակության և հասարակայնության հետ կապերի բաժնի պետ, գնդապետ Բ. Մուրադյանի համոզմամբ՝ մրցույթի արդյունքները ցույց տվեցին, որ համաձիմ այդ պատասխանների ու պարմանուհիների, ձևավորվում, զարգանում է հայի այն տեսակը, որը կրելով ազգային ավանդույթները, զոհված ազատամարտիկների ոգին, արծվային հայացքով, արծվային պացքով ապահովվելու են մեր ազատ, անկախ Արցախի հարատևումը: Աղջիկները ցույց տվեցին, որ պակաս չեն տղաներից և կանգնած են նրանց կողքին ու իրենց հնայքով, ոգևորությամբ ավելի հերոսական մղումների են տանելու նրանց:

Ամեն տարի ազատամարտիկների միությունը սիրով մասնակցություն է ունենում այս միջոցառմանը՝ ոչ միայն պաշտոնական ներկայություն ապահովելով, այլև մրցանակներ շնորհելով: ԱԱՄ աշխատակազմի ղեկավար Ռոբերտ Բաղդյանի շնորհավորանքի խոսքում մեր լավագույն կարգախոսներից մեկն է ամփոփում՝ մեր հայրենիքը մենք պիտի պաշտպանենք, քանզի օտարի վրա հույս չպետք է դնել: Իսկ հայրենիքի պաշտպանությանը դպրոցից, եթե չասենք՝ մանկապարտեզից պիտի սկսել պատրաստվել:

ԼՂՀ կրթության և գիտության փոխնախարար Միքայել Համբարձումյանը, շնորհավորելով աշակերտներին և սպաներին 2013թ. ռազմամարզական խաղերը հաջող եզրափակելու համար և նոր հաղթարշավներ մտադրելով, կոչ արեց ինքնահասնագետացում չսպառել և սպասել մինչև հաջորդ տարվա մրցումները: Դա մի յուրահատուկ-ստուգատես է, որտեղ դպրոցների ղեկավարությունը, ուսուցիչները պետք է դասեր առնեն և շտկեն թե-

րությունները: Իսկ «Արծվիկ»-ների համար այն նախաշեմ է արծիվ դառնալու և փոխարինելու այսօրվա զենքերակներին:

ԼՂՀ ԿԳՆ ՌՀ, ՖՂ և ՀԿԿ բաժնի գլխավոր մասնագետ Մուրադ Շահրամյանը հրապարակեց «Արծվիկ»-2013 ռազմամարզական խաղերի արդյունքները: Հաղթող է ճանաչվել հ. 11 ավագ դպրոցի ջոկը, երկրորդ և երրորդ տեղերը միավորների աննշան տարբերությամբ զբաղեցրին Մարտունու շրջանի Հերիերի և Ասկերանի միջնակարգ դպրոցների ջոկերը:

Նրանք ԿԳ նախարարության կողմից պարգևատրվեցին պատվոգրով և արժեքավոր նվերով, իսկ թիմի յուրաքանչյուր անդամ՝ դրամական պարգևով:

Ընդհանուր մրցությունում, բոլոր մրցածներում հավաքած միավորներով որոշվեցին անհատական հաշվարկով մրցանակային տեղերը:

3-րդ տեղը զբաղեց հ. 11 ավագ դպրոցից Էռնեստ Հայրապետյանը, 2-րդ տեղում էլ Մուրադյանը, 1-րդ տեղում Մուրադյանը: Կարգան Մաղաբեյանը, իսկ առաջին տեղում Էդուարդ Անդրյանը՝ Հաղթուրից: Այս պատանու անունը շատ հնչեց մրցանակաբաշխության ժամանակ: Նա նաև լավագույն ջոկի հրամանատար ճանաչվեց և լավագույն հրաձիգ: Նրա մասին իր հիացումները չկարողացավ թաքցնել Վ. Գրիգորյանը՝ ասելով, որ ով բոլոր օրերին ներկա է գտնվել այդ պատանու խաղերին, պարզապես չէր կարող չհիանալ նրանով: «Կեցցես, զինվորն այդպիսին պետք է լինի», - ասաց նա:

Պատվոգրերով և հուշանվերներով պարգևատրվեցին նաև առանձին մրցածներում լավագույն ճանաչված աշակերտ-աշակերտուհիները: Ֆիզիկական պատրաստությունից հաղթող է ճանաչվել Մարինե Մուսայեյանը՝ հ. 11-ից ավագ դպրոցից, շարային պատրաստությունից նույն դպրոցից՝ Լուսինե Առաքելյանը, քաղաքացիական պաշտպանությունից՝ Վարդան Մաղաբեյանը՝ դարձյալ նույն կրթօջախից:

Հրաձգության մրցումներում հաղթող ճանաչվեցին 2 հոգի իրենց միավորներով՝ երկուսն էլ Հաղթուրի դպրոցից՝ Էդուարդ Անդրյանը և Լիլիթ Մայիլյանը:

Ավտոմատի քանդում-հավաքում, պահեստատուփի լիցքավորում մրցածից հաղթող է ճանաչվել Ռոման Աղայանը՝ Հերիերից:

Կրթության և գիտության նախարարության կողմից դրամական պարգևի արժանացան մրցանակային տեղեր զբաղած դպրոցների զինղեկները:

ԼՂՀ պաշտպանության նախարարությունը նույնպես պատվոգրով և արժեքավոր նվերներով պարգևատրեց մրցանակային տեղեր զբաղած թիմերին, այդ թվում հաղթողին՝ սափոր: Պարգևները հանձնեց գնդապետ Բ. Մուրադյանը:

ԱԱՄ-ի արժեքավոր նվերներին արժանացան անհատական մրցածներում հաղթողները: Նվերներ հանձնելու հերթը փրկարար ծա-

ռայությանն էր: Այն կատարեց քաղաքային վարչության պետ, գնդապետ Արթուր Զավադյանը: Քաղաքաշտպանության փուլերում մրցանակային տեղեր են զբաղեցրել հ. 11 ավագ, Հերիերի միջնակարգ և Շուշիի ավագ դպրոցների թիմերը, որոնք պարգևատրվեցին



Լավագույն «Արծվիկ» Էդուարդ Անդրյանը երազում է ընդունվել ԱրՊՀ նախազորակոչային և ֆիզիկական պատրաստություն է բաժինը, իսկ բանակում ծառայել որպես հետախույզ:



Մրցանակային տեղեր զբաղած ջոկերի զինղեկները՝ Ա.Առաքելյան, Է.Առաքելյան, Հ.Քաղաքաբեյան:



Ընկերուհիները ուրախ են և հուզված հրաձգությունից լավագույն ճանաչված Լիլիթ Մայիլյանի հաջողություններով:

պատվոգրերով և հուշանվերներով: Խաղերի գլխավոր պատասխանատու Վ. Գրիգորյանը առանձնակի շնորհակալություն հայտնեց Քաշաթաղի և Շահումյանի շրջանների թիմերին՝ զինվորին վայել բարձր կարգապահության համար: Նրանք շատ ժժվարին պայմաններում են աշխատում՝ չունենալով ուսումնանյութական բազա, բայց բոլոր տվյալները կան ասելու, որ մի քանի տարի հետո լուրջ մրցակիցներ կլինեն այս խաղերում:

Ս. ԽԱՀԱՏՐՅԱՆ

ԳԻՊՈՒՄՆԵՐ ՀԱՅՈՑ ԼԵՉՈՒ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՐԿԱՆԵՐԻՑ

Արցախի մի խումբ դպրոցականներ լավագույն արդյունքներ են գրանցել հայոց լեզու և հայ գրականություն առարկաների օլիմպիադաների Հայաստանի Հանրապետության եզրափակիչ փուլում:

Ստեփանակերտի հ.1 հիմնական դպրոցի 9-րդ դասարանի աշակերտուհի Աննա Արզումանյանը և Մարտունու շրջանի Բերդաշենի միջնակարգ դպրոցի 12-րդ դասարանի աշակերտուհի Նարե Առստամյանը գրավել են առաջին տեղը հայոց լեզվից՝ արժանանալով առաջին կարգի դիպլոմների: Բերդաշենից մեկ այլ դպրոցական տասներորդի Մերի Սողոմոնյանը, փայլուն արդյունք գրանցելով, ամենաբարձր՝ 60 միավորով արժանացել է 1-ին կարգի դիպլոմի հայ գրականությունից:

Երկու աշակերտուհիներ՝ Մարտակերտի Վ. Բալայանի անվան հ.1 միջնակարգ դպրոցի 11-րդ դասարանից Լիլիթ Հարությունյանը և Քաշաթաղի շրջանի Վարդուտ գյուղի միջնակարգ դպրոցի 10-րդ դասարանից Անի Կարոսյանը, գրավելով երկրորդ տեղը, արժանացել են համապատասխան կարգի դիպլոմների:

Մարտակերտի շրջանի Հաթերքի միջնակարգ դպրոցի 10-րդ դասարանի աշակերտուհի Արշալույս Գրիգորյանը ստացել է «Լավագույն շարադրություն» մրցանակ: Շնորհավորում ենք մրցանակակիրներին և նրանց ուսուցիչներին:

Սեֆ. Լրատվություն

ՀԱՎԵՐԾԻ ՃԱՍՓՈՐԴ ԲԵՐՈՒՄԱՆ ԵՐԱՄԱՆԱՏԱՐԸ



Հայրենի հողի ամեն մի անկյունի ազատագրությունը մեր դարավոր իղձի՝ ազատ հայրենիք ունենալու իրականացումն է, որին մեր ժողովուրդը հասել է հերոսական պայքարով՝ ներդնելով մեծ ծիզեր և հաղթահարելով օրհասական պահեր... Եվ ազատագրական պայքարի ամեն մի ժամանակահատված իր նկարագիրն ունի:

...1992թ. Մայիսի 9-ին հաջորդող ամիսներն ու տարիներն էին: Ազատագրված Շուշին նոր կյանք էր սկսում: Հին շուշեցու կողքին իր տեղն էր անում նոր շուշեցին՝ վտարանդի, անօթևան, ընտանիքի գոյություն հայթայթող, քաղաքի փառքին ապավինած հայր: Այսպես կազմավորվում էր Շուշիի նոր բնակչությունը: Հինը գիտեին հին քաղաքի գաղտնիքներն ու առեղծվածները, նորերը պրպտում ու բացահայտում էին դրանք: Նորերը նոր էին յուրացնում հնագույն քաղաքի յուրակերպությունները, լսում հնրերի պատմությունները, զննում նրանց զայրած բնավորությունների պարփակվածությունը, որ պատճառ էր ազդերի ներքին հայտնաբերած քաղաքակրթության և ձգտում ներդաշնակություն հաստատել նրանց հետ. բոլորին միավորում էր հարատևման կանգը:

...Քաղաքը դեռևս տեղ-տեղ միտում էր: Սակայն ավերված տների կողքին մեծամասամբ պահպանվել էին ամխաբար տներ ու շենքեր, որոնցում ապաստանում էին եկվորները: Շուշին բնօրրանի հոգածությամբ կանգնում էր բոլորին և վճռականորեն ծիզ անում կայանալու... Եկվորներից շատերը բռնագաղթածներ էին՝ տունուտեղ կորցրած Բաքվում, Սոււմգայիթում, բռնությամբ հայաթափված տարածքներում: Գալիս էին, հարմարվում, ծիլ տալիս կամ գնում էին: Անընդհատ հոսք կար գալու և գնալու...

Կայանալու ժամանակներ էին, և աստիճանաբար ձևավորվում էր բնակչության հիմնամասը: Անկախում վիճակները շտկվում էին: Մարդիկ ձեռք էին բերում կացարան, աշխատանք, գոյամիջոցներ: Շատերը լավատեսորեն հավատում էին, ոճանք էլ չէին հարմարվում անորոշ իրավիճակին, օրի, հոսանքի, գազի, կենսականորեն անհրաժեշտ պիտույքների բացակայությանը... Այնուհանդերձ, հավատով լի ուժերը քիչ չէին, որոնք տոկալու ուժ ունեին. դիմակայում էին խիստ բնա-կլիմայական պայմաններին, տանում պատերազմական և այնուհետև՝ հետպատերազմական՝ դժվարությունները: Երկրում ռազմական իրավիճակ էր:

Եվ, այնուամենայնիվ, նրանք մենակ չէին: Կային հոգատար անձինք, որոնք խրախուսում էին բնակչությանը, օգնության ձեռք մեկնում: Նրանց շնորհիվ Շուշին դիմակայություն լիցք առավ, քանզի զգաց, որ մենակ չէ, ունի սատարող ձեռք:

Հոգատար մարդկանց շարքում իր եական դերն ունեցավ Շուշիի գնդի հրամանատար Վաչագան Իշխանյանը, որի գործունեությունը ծավալվում էր ոչ միայն մարտաշարժում մարտագործություններ կատարելով, այլև, որ շատ կարևոր և անհրաժեշտ էր՝ քաղաքի, մարդկանց հրատապ խնդիրների լուծման սրտացավությամբ:

Գնդի հրամանատարը այդ սուղ ժամանակներում, երբ քաղաքը ձևավորման փուլում էր, ամենահեղինակավոր դեմքն էր Շուշիում: Մարդիկ պատմում էին, թե ինչպես այս կամ այն հարցին լուծում տվեց Վաչոն: Այդպես էլ նրան ատում էին: Նա ճակատի և թիկունքի հրամանատարն էր միաժամանակ: Եթե այդպես չլիներ, գուցե քաղաքը չնչսասպառ կլիներ լուծման կարող բազմաթիվ խնդիրներից և իր փառքին համեմատ ոգին չունենար, սակայն կերտվեց: Բնակչությունը ապավինեց իր հրամանատարին, հոգածու անձին, բարերարին, լավ կազմակերպչին ու մեծ աջակցին: Ամբողջ քաղաքը վստահում էր նրան և ասում, որ դժվարին խնդիրների լուծման համար գնդի հրամանատարն անպայման մի բան կանի...

Նախկին զինակիցներն ու նրանց հարազատները պատմում են, թե ինչ սրտացավ հրամանատար է եղել Վաչագան Իշխանյանը. խրախուսել է իր մարտիկներին, հոգ տարել վիրավորների ապաքինման, իր յուրաքանչյուր զինվորի բարօրության համար...

Այսպես շարունակվեց այնքան, ինչքան Շուշիում գործում էր պաշտպանական շրջանը՝ հրամանատար Իշխանյանի գլխավորությամբ: Այս ամենի համար նրա զինվորները, մարտական ընկերներն ու հառնող քաղաքի բնակիչներն ընդունում էին նրան որպես բացառիկ հեղինակություն: Այդ հեղինակությունը նրա անունից երբեք չպակասեց, անգամ, երբ ինքն այլևս Շուշիում չէր...

Հետո կյանքը հետզհետե թափ առավ, և քաղաքը սկսեց ինքնավստահ քայլեր անել: Եվ, միևնույն է, թանկ հիշողությունները չեն խամրում մարդկանց հոգում: Ամեն անգամ հրամանատարի մասին խոսք բացվելիս մարդիկ իրենց գոհունակությունն էին հայտնում:

...Այն ժամանակներում Շուշիից Ստեփանակերտ կամ կանոնավոր երթուղային տրանսպորտ չկար, կամ կար, չկար, և մարդիկ հիմնականում տեղաշարժվում էին պատահական մեքենաներով, անգամ ՋԻԼ-ով, ԿամԱԶ-ով, տրակտորով...

Վ. Իշխանյանը ոչ մի --ճամփորդի ճանապարհին չէր թողնում, իսկ երբ նա երեխաների էր վերցնում ծնողների հետ, որոնք ուրախ խայտում էին, որ հաջողվել է մեքենա նստել, այն էլ՝ Վաչոյի, ծնողները երբ սաստում էին լուռ մնալ, նա ինքն էր խրախուսում երեխաներին աշխույժ լինել, որպեսզի կյանքը եռա...

Շատերն էին երանի տալիս նրան, ում բախտ է վիճակվել շփվել հրամանատարի հետ՝ ազդեցիկ, սրտացավ, սատար-Սահակյան ըող, հոգատար...

Հիշում եմ՝ 94-ի դեկտեմբերին պետք է գնայի Բերդաձոր: Ենթադրյալ գյուղերը նոր էին ազատագրվել: Ուզում էի նյութեր քաղել Բերդաձորի ինքնապաշտպանության խորհրդի (ԲԽԽ) անդամների գործունեության մասին: ԲԽԽ-ի աշխատանքները կորոզինացնում էին Առնո Սկրտչյանն ու հայաստանցի Անդրանիկ Հարությունյանը: Մի խումբ մարդկանց հետ ենթաշրջանի Հին Շեն գյուղը գնալու հնարավորություն ստեղծեց հենց հրամանատարը. բեռնատար մեծ մեքենայով պետք է գույք հասցվեր գյուղ՝ դպրոցի և մանկապարտեզի համար: Մինչ գույքը բեռնաթափվում էր, տեղեկություններ էի քաղում քաղաքի պաշտպանների մասին դպրոցի տնօրեն Կարեն Բարսեղյանից ու համագյուղացիներից:

...Առնոն ԲԽԽ-ի զարկերակված հոգին էր, իսկ ամենաեռանդուն անդամներն էին Գառնիկ Առտաձյանն ու Արմիկ Սահակյանը Հին Շենից (տարիներ հետո հետմահու ծնված, որը անունով անվանակոչված նրա որդու՝ Արմիկի դաստիարակ էր, որ մի անգամ իր անունը թերթում կարդալով՝ հուզվեց ու բանաստեղծական տողեր գրեց չտեսած և բաղձալի հոր մասին), Հրաչիկ Պետրոսյանը՝ Եղծահողից, Գագիկ Հարությունյանը՝ Մեծ Շենից: ԲԽԽ-ի նպատակալաց գործունեությունն ու Առնոյի վճռական ձեռնարկումներն արթնության նախանշան տվեցին բոլոր բերդաձորցիներին, որոնք արիաբար հետ էին մղում թուրք-օսոնակների հարձակումները մինչև 91-ի մայիսի 15-ը, երբ հրոսակը ծանր թրթուրավոր տանկերով մտավ Բերդաձոր: ԲԽԽ-ի անդամները բանտարկվեցին Բաքվի Բայիկի և Շուշեցու բանտերում, իսկ բնակչության մի մասին բանտարկեցին Շուշիի բանտում, մյուսները տեղահանվեցին... 93-ի սեպտեմբերին՝ գյուղի ազատագրումից (1993թ. մայիսի 17) մի քանի ամիս անց Առնո Սկրտչյանն ու Հրաչիկ Պետրոսյանն ահավոր կտտանքներից հետո ազերի հրոսակները դատապարտեցին մահվան...

Մինչդեռ այս օրերին Առնո Սկրտչյանը կղաճար 60 տարեկան՝ շրջապատված զավակներով ու թոռներով, այնինչ հայրը՝ բերդաձորցի ազդեցիկ ու հեղինակավոր մտավորական Միքայել Սկրտչյանը, անասելի դժվարություններով էր կարողացել որդու աճյունը Բայիկից տեղափոխել և հայրենի հողում ամփոփել...

...Հետո տարիները գումարվում էին իրար, բերում հորեյաններ՝ անցյալը դարձնելով ճշգրիտ պատմություն... Եվ մինչ երկիրն իր 25-ամյա պայքարի տարիներն էր թերթում, լրահոսը պատմում մեր պայքարի բովի մասին, հանկարծ մի լուր... բոթի սևակնած գույնների մեջ ծրարված, բերդաքաղաքին հայտնում է հերոս հրամանատարի կյանքի մայրամուտի մասին: Շուշին դարձյալ խոսում էր իր մեծագույն հրամանատարի մասին ու սգում էր, որ նա հավիտյանս հանգավ...

Դարակեսից հետո 1 տարի ու 1 օր անց՝ 2013թ. մարտի 28-ին կյանքին հրաժեշտ տվեց անվանի հրամանատարը, Շուշիի ազատագրական ժամանակաշրջանի մեծագույն դեմքը, հայր, հրամանատարն ու Սարդը:

Նույն օրը Շուշիի Ղազանչեցոց եկեղեցում գատկական Ավագ շաբաթվա հինգշաբթի օրվա ոտնվայի և խավարման գիշերվա արարողությունների ավարտին Արցախի թեմի առաջնորդ Պարզև արքեպիսկոպոս Սարտիրոսյանը ներկայաներին հայտնեց ուրբաթ օրվա Քրիստոսի խաչելության և թաղման կարգի մասին: Ուրբաթ օրվա ծիսակատարությունից հետո հայտնեցին, որ Սուրբ գերեզմանի ծաղիկները կբաժանեն շաբաթ օրը: Հենց այդ օրը՝ մարտի 30-ին, Շուշիի լեգենդար հերոսի՝ Վաչագան Իշխանյանի հոգեհանգիստն ու հուղարկավորությունն էր: Առավոտյան եկեղեցուց խնդրեցի 2 ծաղիկ, և իսկույն ճանապարհվեցինք Ստեփանակերտ, որտեղից վերջին հրաժեշտը պիտի տալիք Հիկաբարի արժվին (պատվամունը՝ Յաշա Բաբայանի):

Ծաղիկներից արնագույնը ձեռքս, ընդամենը մի հատիկ՝ բարձրանում էի շենքի մուտքով: Վաղ առավոտվանից արդեն ահագին բազմություն էր հավաքվել: Մշտապես իր հարգատ Ժողովրդով շրջապատված հրամանատարը հավիտյանս ննջում էր ժողովրդի սզի ներքո: Անգամ շուշիաբնակ 95-ամյա Մանյա տատիկը ողբ էր ասում... Սի գնվորական սզո երաժշտություն էր նվագում: Խնդրեցի մի պահ լռել: Տիրեց խոր լռություն: Ասացի, որ ձեռքս մեծ մի հատիկ ծաղիկը բերել եմ իր հարազատ քաղաքի Ղազանչեցոց Անենափրկիչ եկեղեցուց, և թող Ձինվորի կողքին հանգչի Քրիստոսի ծաղիկը: Ասացի, որ ողջ Շուշին է սգում իր սիրելի, իր քաղաքի պատմությունը կերտած հրամանատարի անժամանակ կորուստը, սգում է որպես իր բարձունքի հերոսի, իր վեհաշուք արծվի՝ վերջում կարդալով Բայրոնի՝ հերոսին նվիրված բանաստեղծությունը, պատվիրելով այն դնել Նրա լուսանկարի տակ:

Հերոս, դու անցար քո կյանքի ողին, Այժմ քո փառքը կապիր աշխարհում, Կապիր քո վսեմ անձնուրաց հոգին Սուրբ հայրենիքիդ հզոր երգերում, Կապիր քո գործը-գործ հերոսական, Որ ազատություն պարզեց նորան:

...Երբ դուրս եկա, դրսում հուղարկավորներ մեծ հոսքով գալիս էին ու սովախառնում: Բերդաքաղաքը վերջին հրաժեշտն էր տալիս իր հրամանատարին, Արցախը սգում էր իր արժանավոր որդու կորուստը, որն ապրեց ու հերոսացավ և գնաց միանալու անմահներին: Եվ ընդմիջտ ապրելու է սերունդների հիշողության մեջ հայրենապաշտպանության ու հերոսացման իր վսեմ գործերով:

Առաջանում է զինվորական շարասյունը՝ հերոսի մարտական շքանշաններն ու պարգևները պահած, ՀՀ և ԼՂՀ նախագահական, կառավարական և զինվորական գերատեսչությունների ծաղկեպսակները բռնած: Ձինվորական նվագախմբի սզո երաժշտության ներքո շարժվում է թափորը: Ողջ Արցախը՝ երկրի նախագահից, պաշտպանության նախարարից մինչև վերջին քաղաքացին, հարգանքի տուրք էր մատուցում իր արժանի գավալին և զինվորականին վայել մեծարանքով իր վերջին հանգրվանը ուղեկցում Հավերժի ճամփորդ Վաչագան Իշխանյանին: Նրա ծոցում Հավերժի ծաղիկն էր՝ Քրիստոսի գերեզմանից, որը շնչում էր նրա ունկերին ասքը հայրենի երկրի ու նրա արժանավոր գավալի մասին...

Մյուս ծաղիկը տարա եղբորս գերեզմանին, որը նույնպես մեր Գոյամարտի մասնակից էր...



Չախից՝ Սամվել Բաբայան, Վաչագան Իշխանյան, Բակո Սահակյան

ՇԵՏԱԲԵՐԱԶԱՐԺ

ՉՈՒՐ ՄԵՐ ԿՅԱՆՔՈՒՄ

Բաց դասի հաճախ ենք ականատես լինում, իսկ խմբակային բաց պարապմունքի՝ գրեթե ոչ: Օրերս Ստեփանակերտի Ա. Դուլյանի անվան հ. 2 հիմնական դպրոցում կազմակերպված գրական խմբակի բաց պարապմունքը «Ջուրը մեր կյանքում» հետաքրքիր թեմայի ոչ ավանդական գեղեցիկ ներկայացում էր՝ նվիրված «Բողբոջ» գրական խմբակի 10-ամյա հոբելյանին: Ինչպես ասաց խմբակի ղեկավար, բազմաթիվ հետաքրքիր միջոցառումների հեղինակ Անահիտ Մետրոպոլիտանը, թեման աշակերտներն են ընտրել, ինչի համար հիմք են հանդիսացել կատարված բազմաթիվ էքսկուրսիաները հայրենի երկրում, ուխտագնացությունը մայր Հայաստան, այցելությունները սուրբ օջախներ, տեսարժան վայրեր: Դասի ընթացքում բացահայտվեցին աշակերտների սերը գրականության, հայրենի եզերքի հանդեպ, նրանց գրական հակումները, գիտելիքները մայրենիից, տեղեկատվական տեխնոլոգիաներից օգտվելու և այլ հմտություններ:

Յեցին դրանց նվիրված մեր գրողների ստեղծագործությունները: Դասին ներկա ուսուցիչներից ոմանք նաև իրենց տեսան էկրանին, երբ ցուցադրվում էին պահեր Արևմտյան Հայաստան կատարած ուխտագնացությունից, որն անցած ամառ կազմակերպել էր Անահիտ Մետրոպոլիտանը: Վանա լիճ, Արածանի գետ, Աղթամար կղզի՝ մեր ժողովրդի համար սուրբ այլ անուններ... Դրանց

Ստեփանակերտը սնող գետերի մասին՝ ի լրումն աշակերտների գիտելիքների): Արթուր ԳՐԻԳՈՐՅԱՆ, ԼԴՀ «Ջրամատակարարում և ջրահեռացում» ՓԲԸ փոխտնօրեն: Անչափ ուրախ եմ, որ մատաղ սերունդը գնահատում է ջրի նշանակությունը: Երեկոյան որոշել էի ավելի մեծ տեղեկատվություն տալ երեխաներին, բայց տեսա, որ նրանք ավելի լավ են

նաև, որ ՀՀ-ում և Արցախում մեր ջրերը միշտ կարկաչեն, և ոչ մի այլազգու թույլ չտանք, որ ապականի մեր այս մաքուր աշխարհը: Սա մեր առաջին պատվիրաններից մեկն է:

Գրեթե ԳՐԻԳՈՐՅԱՆ, քաղաքապետարանի կրթության և սպորտի բաժնի զվխավոր մասնագետ: Շնորհավորեց այս 14 աշակերտներին, որոնք հոբելյանական տարվա խմբակի անդամներն են: Չեզ հաճախակի ենք հանդիպում «Լուսալիզ» էջերում ձեր ստեղծագործություններով: Քաղաքային բաժինը պարբերաբար կազմակերպում է բաց դասեր տարբեր առարկաներից, իսկ խմբակների աշխատանքներն ամփոփվում են միջոցառումների շրջանակներում: Բաց խմբակի պարապմունքի ձևերն արդեն ավանդույթ պիտի դառնան և իրենց փորձով խմբակավարներին սովորեցնեն խմբակ վարելու ձևերը, մեթոդները:



հետ կապված ավանդություններ, երգեր ու բանաստեղծություններ հնչեցին: Այս ոգով անցավ ամբողջ դասը: Ներկայացվեց մասնակիցների տպավորությունները: Մարտիկ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ, Ստեփանակերտի «Ջրուղի-կոյուղի» ՓԲԸ տնօրեն: Այստեղ գտանք այն, ինչ անհրաժեշտ է մեր ապագա սերունդին, ոչ միայն ջուրը, այլև հայրենասիրությունը, որը զուլալ ջրի նման արտացոլվեց միջոցառման ընթացքում: Ջուրն ունի բացառիկ հատկություններ, հիշողություն, կարողանում է գնահատել լավը ու վատը: (Նա նաև տեղեկություններ տվեց Դարաբաղի ջրերի,

պատրաստված: Պետք է իմանալ, որ չնայած մեր երկրամասը հարուստ է քաղցրահամ ջրերով, բայց մենք պետք է ջուրը խնայենք, քանի որ երկրագնդի ջրի քանակը գնալով պակասում է: Բոլորի խնդիրը պետք է լինի ջրի պահպանումը: Օգտվենք, բայց և խնայենք ջուրը: Լուսիա ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ, հ. 2 հիմնական դպրոցի տնօրեն: Ուսուցչական կոլեկտիվի մեծ աշխատանքից այսօր մի մասն է ներկայացվում: Մեր դպրոցական առօրյան հագեցած է նման բազմապիսի ու բազմաբովանդակ միջոցառումներով: Պարապմունքի թեման առանձնահատուկ է, հատկապես եթե հաշվի առնենք, որ ջուրը համաշխարհային խնդիր է: Ցանկա-

մասնակցում Ձեր միջոցառմանը և տեսնում այս հարուստ նյութերով իագեցած դասարանը: Ուրախ եմ, որ երեխաներն այդքան շատ գիտելիքներ ունեն ջրի մասին: Ա. Մետրոպոլիտանը դասի ընթացքում օգտագործեց դիդակտիկ շատ նյութեր: Դա ինձ զարմացրեց և ուրախացրեց: Թեման հետաքրքիր էր, պարտադիր է միշտ ընտրել գրողներին: Բայց թեման կապեցի գրողների ստեղծագործությունների և ընդհանրապես, ամեն ինչի հետ:

Սեփ. Լրագրություն

ՄՈԳԱԿԱՆ ՔԱՌԱԿՈՒՄՆԵՐ

(Սկիզբը՝ նախորդ համարում)

Լատինական քառակուսիներ

Չնայած մաթեմատիկոսներին հետաքրքրում էին հիմնականում մոգական քառակուսիները, գիտության մեջ ու տեխնիկայում առավել կիրառություն են գտել լատինական քառակուսիները: Այն 18-րդ դարում հայտնաբերել է Լեոնարդո Էյլերը և անվանել «Carre latin»: Լատինական քառակուսի կոչվում է n x n չափանի այն քառակուսին, որում տեղադրված են 1, 2, ..., n թվերը այնպես, որ ամեն տողում և ամեն սյան մեջ բոլոր թվերը հանդես են գալիս մեկ անգամ: Նկ. 5(ա, բ) -ում պատկերված են 4 x 4 չափանի այդպիսի երկու քառակուսի: Նրանք օժտված են հետաքրքիր հատկությամբ. եթե նրանցից մեկը տեղադրենք մյուսի վրա, ապա ստացված բոլոր թվազույգերը կլինեն իրարից տարբեր (նկ.5գ): Լատինական քառակուսիների այդպիսի զույգերը անվանում են օրթոգոնալ:

Օրթոգոնալ լատինական քառակուսիների որոնման խնդիրը առաջին անգամ դրել է Լ.Էյլերը, ընդ որում, այսպիսի հետաքրքրաշարժ ծանկերպմամբ. 36 սպաների մեջ ուլանները, դրագոնները, հուսարները, կիրասիրները, կավալերգարները և գրենադները հավասար են և բացի դրանից, հավասար են նաև գեներալները, գնդապետները, մայորները, կապիտանները, պորուչիկները, փոխպորուչիկները, ընդ որում, ամեն զորատեսակ ներկայացված է բոլոր վեց ռանգի սպաներով: Կարելի է բոլոր սպաներին շարել 6 x 6 քառակուսով այնպես, որ յուրաքանչյուր շարայան մեջ և յուրաքանչյուր շարքում հանդիպեն բոլոր ռանգի սպաներ:

1	2	3	4
2	1	4	3
3	4	1	2
4	3	2	1

ա)

1	2	3	4
3	4	1	2
4	3	2	1
2	1	4	3

բ)

Նկ.5

1,1	2,2	3,3	4,4
2,3	1,4	4,1	3,2
3,1	1,3	1,2	2,1
1,2	3,1	2,1	1,3

գ)

Լ.Էյլերը չկարողացավ գտնել այս խնդրի լուծումը: 1901թ. ապացուցվեց, որ այդպիսի լուծում գոյություն չունի: Միաժամանակ Լ.Էյլերը ապացուցեց, որ լատինական քառակուսիների օրթոգոնալ զույգեր գոյություն ունեն բոլոր կենտ n-երի և 4-ի վրա բաժանվող գույգ n-երի համար: Լ.Էյլերը առաջ քաշեց այն վարկածը, որ n-ի մնացած արժեքների, այսինքն n-ի այն արժեքների համար, որոնք 4-ի վրա բաժանվելուց մնացորդում տալիս են 2, օրթոգոնալ քառակուսիներ գոյություն չունեն: 1901թ. ապացուցվեց, որ 6 x 6 չափերով օրթոգոնալ քառակուսիներ գոյություն չունեն, ինչն էլ ուժեղացրեց հավատը Լ.Էյլերի վարկածի իրավացիության մեջ: Սակայն, 1959թ. էՄ-ի օգնությամբ, գտնվեցին սկզբում 10 x 10, այնուհետև 14 x 14, 18 x 18, 22 x 22 չափերով օրթոգոնալ քառակուսիներ: Իսկ այնուհետև, ցույց տրվեց, որ կանայական n-ի համար, բացի 6-ից, գոյություն ունեն n x n չափերով օրթոգոնալ քառակուսիներ:

Մոգական և լատինական քառակուսիները «մոտիկ ազգականներ» են: Ենթադրենք ունենք երկու օրթոգոնալ լատինական քառակուսիներ: Նույն չափանի նոր քառակուսու վանդակները լրացնենք հետևյալ կերպ: Այդտեղ տեղադրենք n(a + 1) | b թիվը, որտեղ a-ն առաջին քառակուսու նույն վանդակի թիվն է, իսկ b-ն երկրորդ քառակուսու նույն վանդակի թիվը: Դժվար չէ տեսնել, որ ստացված

քառակուսու բոլոր տողերի և սյուների (բայց պարտադիր չէ անկյունագծերի վրա) թվերի գումարը հավասար են: Ընթերցողին առաջարկում ենք համոզվել դրանում, կիրառելով նշված բանաձևը նկ.5 (ա, բ) բերված 4 x 4 չափանի լատինական քառակուսիների նկատմամբ, վերցնելով n = 4:

Լատինական քառակուսիները մեծ կիրառություն են գտել ինչպես մաթեմատիկայում, այնպես էլ նրա կիրառություններում՝ էքսպերիմենտների կատարման և արդյունքների մշակման ժամանակ:

Մոգական քառակուսի՝ սուդոկու

Սուդոկուն գլուխկոտրուկ է թվերով, որը վերջին ժամանակներս շատ մեծ տարածում է գտել: Այն ստեղծվել է Լ. Էյլերի կողմից «Լատինական քառակուսի» խաղի հայտնաբերումից հետո՝ այդ խաղի հիման վրա: «Սու» ճապոներենից թարգմանաբար նշանակում է թվանշան, «դոկու»՝ առանձին կանգնած: Երբեմն սուդոկուն անվանում են մոգական քառակուսի: Խաղաղաշար իրենից ներկայացնում է 9 x 9 չափերով քառակուսի՝ բաժանված երեք չափանի փոքր քառակուսիների: Այսպիսով, ամբողջ խաղաղաշարը կազմված է 81 վանդակներից: Նրանցից մի քանիսում նախապես՝ մինչև խաղը սկսելը, տեղադրված են թվեր՝ 1-ից մինչև 9-ը: Կախված նրանից, թե քանի վանդակ է արդեն լրացված, սուդոկուն կարելի դասել հեշտերի կամ բարդերի:

ԱՄՆ-ում սուդոկուն առաջին անգամ հայտնվեց 1979թ. «Del Puzzle Magazine» ամսագրում: Այն ժամանակ այն անվանվեց «Number Place»: Սուդոկուն իսկական տարածում գտավ 1980-1990թթ., երբ ճապոնական «Nikoli» ամսագիրը, սկսած 1986 թվականից, իր էջերում սկսեց պարբերաբար տպագրել այդ գլուխկոտրուկը: Այսօր սուդոկուն շատ թերթերի պարտադիր բաղադրիչն է, այդ թվում՝ շատ բազմամիլիոն տպաքանակով շատ պարբերականների, օրինակ, գերմանական «Die Zeit», ավստրիական «Der Standart»: Սուդոկու տպագրում է նաև ռուսական «ԶԳՊ» թերթը:

Վերջում ընթերցողին առաջարկում ենք լուծել մի փոքրիկ խնդիր: Եթե ուշադիր կադրենք եք հոդվածը, ապա նրա լուծումը ոչ մի դժվարություն չի ներկայացնի:

667-ից մինչև 675 թվերը դասավորել 3x3 չափերով քառակուսու վանդակների մեջ այնպես, որ երեք թվերի գումարը բոլոր՝ ուղղահայաց, հորիզոնական և անկյունագծային ուղղություններով հավասար լինի 2013:

ՊՐԱՏԱՍԽԱՆ

674	667	672
669	671	699
698	675	670

Ալեքսանդր ԽԱԶԱՏՐՅԱՆ
ԱրՊՅ, ֆիզմաթ գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

ՄՅԱԿՈՒՅՑ

ՄԵՃ ԶԻ ՄՊԱՌՆՈՒՄ ՈՓՈՒ ՄՈՎ

Նա է մեր նոր քնարերգության առաջին մեծը և միշտ էլ կմնա վերջինի կողքին, որովհետև նա չի հնամու՛ւմ, ինչպես չեն հնամու՛ւմ ժպտում ու հառաչը, ծիծաղը ու հեծկտոցը...

Պ. Ասակ

Մեր ժողովրդի տարաբախտ պատմության մեջ ևս եղել են բարեբախտություններ: Մեր ազգային բարեբախտություններից մեկն էլ Դուրյանն է՝ մեր ազնվության վկայականը աշխարհի առաջ: Նրա հայտնությունը հրաշքի էր մնամ:

Տաղանդավոր բանաստեղծին մեծաբեղու, նրա հիշատակը վառ պահելու մի գեղեցիկ փորձ էր Ա.Սախարովի անվան հ. 8 ավագ դպրոցի աշակերտների միջոցառումը: Միջոցառում, որ վերածվեց յուրատեսակ ծիսակատարության:

Հուլի-երեկոյն կազմակերպել էին դպրոցի հայոց լեզվի և գրականության մեթոդիկավորման նախագահ Լիանա Ներսիսյանն ու ուսուցչուհի Սվետլանա Ալթանդիլյանը:

Հրավիրված էին ԼԴՀ կրթության և գիտության նախարար Սլավա Ասրյանը, Ստեփանակերտի քաղաքապետարանի կրթության և սպորտի բաժնի պետ Կառլեն Մարգարյանը, ուսուցիչներ տարբեր դպրոցներից, ծնողներ, աշակերտներ:

Դահլիճն արդեն անհամբեր սպասում էր Սլյուտարի սոխակի հետ հանդիպելուն: Եվ ահա բեմ էլավ բարձրահասակ մի պատանի՝ թախծոտ ու խոհուն հայացքով: Իսկ և իսկ Դուրյան: Եվ երբ սկսեց արտասանել (հատկապես՝ «Լճակը»), նրա հոգու խռովքը փոխանցվեց դահլիճին, դուրյանական թախծոտ համակեց բոլորին:

Միջոցառմանը հմտորեն ընթացք էին տալիս հաղորդավարները՝ հիացնելով իրենց սահուն և արտահայտիչ խոսքով: Բանաստեղծի խոհուն ու մեմախոսությունն ընդմիջվում էին ասանունով (ի դեպ՝ բոլոր աշակերտներն էլ ապրում էին Դուրյանով):

Ներկաների ուշադրությունն ու հիացմունքը կրկնապատկվեցին, երբ կինոէկրանը սկսեց թերթել Պ.Դուրյանի կենսագրության ցնցող էջերը:

Իսկ վերջաբանն առավել քան հուզիչ էր. հուլի-երեկոյնի բոլոր մասնակիցները մեկի-մեկիկ սրբազան ակնածանքով

ծաղիկներ խոնարհեցին մեծ բանաստեղծի խորհրդանշական շիրմաքարին (այն տեղադրված էր բեմեզրին)՝ որպես հիշատակի տուրք նրա ծննդյան 162-ամյակին: Հուզված էին բոլորը: Հուզվել էր և ԼԴՀ կրթության և գիտության նախարար Ս. Ասրյանը.

- Միջոցառման ընթացքում պատկերացրի՞մք, թե ինչպես է ապրել ու ստեղծագործել մեծ բանաստեղծը՝ 19-րդ դարի հայ դասական գրականության ամենացայտուն ներկայացուցիչներից մեկը: Ես էլ շատ հուզված ու կլանված լսում էի: Անչափ տպավորված եմ: Չեմ թաքցնում, հոգու հանգստություն ապրեցի:

Իր խոսքում Ստեփանակերտի քաղաքապետարանի ԿՍ բաժնի վարիչ Կ.Մարգարյանը մասնավորապես նշեց.

- Դուրյանը չի մեռել, նա ապրում է ապրողաց մեջ, քանի որ մի մարդ, որի կյանքի սկիզբն ու վերջը, արևածագն ու մայրամուտը գուրգուռված են, և նրա այդ փորձիկ, բայց բյուրեղացած պատառիկներով ստեղծված ժողովածուն ապրում է դարեր և, համոզված եմ, կապրի շնորհիվ մեր երախտագետ աշակերտների, որ շարունակում են սերտել Դուրյան, շարունակում են դուրյանական տողերի մեջ տեսնել այն վեհն ու համարձակայինը, ինչ ինքն է արտահայտել՝ մաքուր սեր, կյանքի նկատմամբ հավատ, հայրենիքի հանդեպ՝ անմնացորդ նվիրում:

- Նման միջոցառումներ պետք է հաճախակի կազմակերպել՝ աշակերտների մեջ սեր արթնացնելով արևմտահայ գրականության հանդեպ, - ասաց քաղաքապետարանի ԿՍ բաժնի գլխավոր մասնագետ Գրետա Գրիգորյանը:

Աշակերտների գեղեցիկ ու արտահայտիչ ասանունքը մի առանձին հմայք հաղորդեց միջոցառմանը:

Գրական-գեղարվեստական երեկոյն, իրոք, ճանաչողական և ուսանելի բնույթ էր կրում: Շնորհակալություն մեր շնորհաշատ ուսուցիչներին՝ նման աշխատանքի և նվիրումի համար:

Լյուսինա ՅԱՐԱՄԻՇՅԱՆ Ստեփ. Սախարովի անվ. հ. 8 ավագ դպրոցի հ. լեզվի և գրականության ուսուցչուհի

«ՆՐԱ ՉԱՅՆԸ ՉԱՐՄԱՆԱԿ ՏԻՐԱՊԵՏՈՒՄ Ե ԳՈՒՅՆԵՐԻ...»



Օրերս մայրաքաղաքի մշակույթի և երիտասարդության պալատի ճեմասրահում կայացավ արցախցի երիտասարդ երգիչ Սար Սարգսյանի «Կարոտ» խորհրդի շնորհանդեսը.

Ծննդով հաղորդքի Սար (Սարիբեկ) Սարգսյանը բազմազավակ ընտանիքի վեցերորդ երեխան է և փոքրուց վայելել է ոչ միայն ծնողների, այլև ավագ քույր-եղբայրների սերն ու գուրգուրանքը: Մայրը պատմում է, որ տղան մանկությունից սիրում էր երգն ու երաժշտությունը և 3-4 տարեկանից աչքի էր ընկնում ոչ միայն մանկապարտեզում, այլև «բակային համերգներով» ուրախություն էր պարզում հարևաններին: Նախնական երաժշտական կրթությունն ստացել է ծննդավայրի Կոմիտասի անվան երաժշտական դպրոցում, իսկ 2002-ին ավարտել է Ստեփանակերտի Սայաթ-Նովայի անվան երաժշտական ուսումնարանի վոկալ բաժինը (Ս. Աղաջանյանի դասարանը): Ապա ուսումը շարունակել է Երևանի պետական կոնսերվատորիայի վոկալ բաժնում, ասպիրանտական կրթություն ստացել հրաշալի երգչուհի և տաղանդավոր մանկավարժ, պրոֆեսոր Սվետլանա Կոլոսարյանի դասարանում: Դեռևս ուսանողական տարիներից համերգային լայն գործունեություն է ծավալում. համերգներով հանդես է գալիս Արցախում, Հայաստանում, Վրաստանում, Ռուսաստանում, Եվրոպայում, ԱՄՆ-ում և այլուր: Շնորհաշատ երգչի ստեղծագործ ու պրպտուն միտքը երգարվեստի խայտաբղետ աշխարհում ուրույն ոճ ու ձևագիր մշակեց իր համար՝ ակադեմիականի ու էստրադայինի հետաքրքիր գուրգուռությամբ: Նպատակը մեկն է՝ ժամանակակից ունկնդրին մատուցել դասական երգը՝ յուրովի մեկնաբանությամբ ու նոր, հաճախ անսպասելի գործիքավորմամբ՝ նվագախմբային կատարմանը ներդաշնակ միահյուսելով բլուզը, շվին, քամոնը, դուդուկը, մանջուրը, կիթառը և այլ գործիքներ: Նրա երգացանկը ևս հաճելիորեն զարմացնում է իր բազմաշերտությամբ՝ հայ դասական և ժամանակակից կոմպոզիտորներ, ռուսական և արտասահմանյան երգարվեստի լավագույն էջեր՝ ռոմանտից մինչև օպերային արիաներ: Երգիչը շատ պահանջկոտ է ոչ միայն իր երգարվեստի, այլև բեմական արտաքինի հանդեպ, ինչն աչքի է զարնում նրա յուրաքանչյուր բեմելի ժամանակ:

Կուրսերից անդրադառնալ նրա երգարվեստի մի կարևոր առանձնահատկությունն է. Սարը մեր այն եզակի երիտասարդ արվեստագետներից է, ովքեր ժամանակակից ունկնդրի առջև բացել են մի շքեղ, բայց, ցավոք, մոռացության մատնված գանձանակ: Խոսքս հայ քաղաքային երգի կամ ռոմանտի մասին է, որն այսօր հանիրավի մոռացված է, մինչդեռ ունենք հրաշալի գոհարներ՝ Նիկոլ Գալանտերյան, Ռոմանոս Մելիքյան, Դանիել Ղազարյան, Վաղարշակ Կոտոյան, Էդուարդ Աբրահամյան և ուրիշներ:

Սար Սարգսյանի «Կարոտ» ծայրասկավառակը բարձր գնահատականի է արժանացել մասնագիտական շրջանակներում. մեջբերենք Հայաստանի երաժշտական ընկերության նախագահ, ՀՀ մշակույթի վաստակավոր գործիչ Դավիթ Ղազարյանի կարծիքը. «...Ինձ հաճելի զարմացրին հայ դասական և ժամանակակից կոմպոզիտորների ստեղծագործությունների կատարումները, և որ ամենակարևորն է՝ արված է ճաշակով փոխադրումներ, գործիքավորում, բայց պահպանված է մայր մեղեդին ու հնչում է շատ թարմ և հաճելի»: ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ, կոմպոզիտոր Վիլլի Վայները, «Կարոտը» համարելով երգչի իսկական ստեղծագործական հաղթանակը, հիացմունքով է գրում նրա քնարական բարիտոնի յու-

րահատկությունների մասին. «Շնորհիվ վերին ռեգիստրներում հրաշալի հնչող նոտաների և լավ վոկալ դպրոցի՝ այս երգչի ձայնը հաճախ հնչում է որպես դրամատիկ տեմո: Նրա ձայնը տիրապետում է զարմանալի գույների, հավասար հնչում է բոլոր օկտավաներում, իր տեմբրով և հագեցվածությամբ ներթափանցում է հոգու խորքերը»: Ցավով պիտի նշենք, որ երաժիշտ մասնագետների կողմից այդքան բարձր գնահատված ծայրասկավառակը մեծ դժվարությամբ ստեղծվեց՝ երկու տարում, և վերջապես թողարկվեց Մոսկվայում՝ երգչի թոշակառու ծնողների նյութական աջակցությամբ, երբ մերժում ստացավ այն 30 մեծահարուստներից, ուն հիմել էր նամակով: Ավաղ, Մանթաշովների ժամանակներն անցել են, իսկ միայն պետական հոգածությունը շատ քիչ է:

Շնորհանդեսի ժամանակ երգիչն իր շնորհակալությունն ու երախտագիտությունը հայտնեց այն բոլոր երաժիշտներին ու մարդկանց, ովքեր իր կողքին էին և կարեցածին չափով աջակցել են ծայրասկավառակի թողարկման աշխատանքներին: Ասենք, որ առաջին շնորհանդեսը կայացել է Երևանում մարտի 19-ին՝ երգչի ծննդյան օրը, երկրորդը՝ Արցախում, որին կիստեսնե թբիլիսիի, Մոսկվայի ու Սանկտ Պետերբուրգի հանդիսությունները: Չայնասկավառակի «Կարոտ» խորագիրը, ըստ երգչի, երեք նախապայման ունի. «Նախ՝ նրանում տեղ է գտել Գ. Արմենյանի մի գողտրիկ ստեղծագործություն, որը կոչվում է «Կարոտ», երկրորդ՝ այդ երգերը մոռացված են վաղուց, շատ քիչ են կատարվում, և կարող կա դրանց հանդեպ, և հետո՝ բոլոր երգերը՝ սիրային թե հայրենասիրական, կարողտի երգեր են»:

Դառնալով շնորհանդեսին՝ նշենք, որ այն բացեց Սար Սարգսյանը Էդ. Աբրահամյանի «Մանուշակ» երգով: Երգչի թավշյա բարիտոնը առաջին իսկ նոտաներից գերեց ներկաներին իր գեղեցիկ երաժշտականությամբ ու զգացմունքայնությամբ: Հանդիսավար Ծովինար Բարխուդարյանը հակիրճ ներկայացրեց երգչի անցած ստեղծագործական ուղին, ապա շնորհավորանքի խոսք ասաց և բարի երթ մաղթեց «Մնակած» պետական կամերային երգչախմբի ղեկավար Սարինե Մեսրոպյանը, ուն հետ երգիչը հաջողությամբ համագործակցում է արդեն քանի տարի: Ասենք, որ երգչի ամենասիրած «Հեյ, Արցախ» երգը հեղինակի՝ Ռեբերտ Ամիրխանյանի նվագակցությամբ և երգչախմբի ծայրասկավառակությամբ տեղ է գտել ծայրասկավառակում:

Արցախի պետական կամերային նվագախմբի գեղարվեստական ղեկավար և իրիժոր Գևորգ Մուրադյանն էլ շնորհավորեց երգչին առաջնելի առթիվ՝ բարձր գնահատելով նրա պրոֆեսիոնալ մոտեցումն ու մեծ համարձակությունը հատկապես հայկական ռոմանտների նորովի մեկնաբանության համար. «Ինձ՝ որպես երաժշտի գերեցնալ այն, որ դրանք շատ դժվար են վոկալ առումով, և երգիչն իր ձայնի ծավալը լիովին ու լավ է օգտագործում»:

ԼԴՀ մշակույթի և երիտասարդության հարցերի նախարար Ն. Աղաբալյանը նույնպես բարձր գնահատեց արցախցի երգչի հաջողությունները. «Ապրելով Արցախից դուրս՝ դու երբևէ չես կտրվել Արցախից, միշտ եղել ես մեր կողքին և յուրաքանչյուր ստեղծագործություն, այդ թվում և այս ծայրասկավառակում տեղ գտած գործերը, դու ներկայացրել ես առաջինների թվում և արցախցի ունկնդրին: Սա խոսում է քո հայրենասիրության և մեծ պատասխանատվության մասին»: Նախարարը ծայրասկավառակը կարևորեց այն առումով, որ այն յուրօրինակ ամփոփումն է կատարված աշխատանքի և մեկնարկ ստեղծագործական նոր փուլի: Ապա հաճելի անակնկալ մատուցեց երգչին՝ խոստանալով աջակցել «Հեյ, Արցախ» երգի տեսահոլովակի ծայրագրությունը: Հուսանք՝ այս և հետագա ծայրասկավառակները հաջողություն ու ճանաչում կբերեն երիտասարդ երգչին, որպեսզի իր երգարվեստով նա դեռ երկար ծառայի հայ երգին և այն արժանավունյա ներկայացուցի թե՛ մեզ, թե՛ օտար հանդիսատեսին:

Մելանյա ՄԻՆՈՆՅԱՆ

ՄԱՆՈՒՆԱԿ ՏԱՏԻՆ

Ութսունն անց, թորշոմած դեմքով կին էր Մանուշակ տատին՝ եղբորս հարևանուհին: Ապրում էր հարեցող ուրդու հետ, որը ամեն երեկո գալիս էր հարբած և մորը կոպտելով, վիրավորելով, հարևաններին գլխին հավաքելով, մի կերպ մտնում անկողին: Խեղճ կինը լացելով անհիտում էր իր բախտն ու ասում.

- Ախր, հորի՞ չեմ մեռիլ, հը՞:

Ես խղճում էի այս կնոջը: Ուսանող էի, երեկոյան երբ տուն էի գալիս, մուտքի դեմը սպասում էր ինձ:

- Եկա՞ր, բալա, ուշ է, կվախանամ քեզի համար:

Ասում էր ու ինձ հետ տուն մտնում: Ընթրում էր ինձ հետ ու բուռնորի քաշում:

- Մի հատ երգի էլի, Մանուշակ տատի,- խնդրում էի ես:

- Վախ, մերիկ ջան, թուրքը եկավ,

խորոտ յարիս առավ, տարավ

խաբար տանիմ Անդրանիկին,

իմ յար փրկի, ինձ հարս բերի:

Երգում էր ու ասում. «Մահուբի Գևորգ, հորի՞ սուգ ու շիվան կանիս: Էլ թուրք չկա: Բալա, բայց հըմի էլ բախտ չիկա, չե՞»:

Հետո սուրճ էինք խմում ու Մանուշակ տատին բաժակս նայում էր.

- Ես սիրում տղան քեզի կխավնի,

բայց Սուրբ Աստվածածին ու Մշո Սուրբ Կարապետ վկա, կասաս, կխոսաս, համա քու սիրտ Էնոր խեստ չէ, բալա:

Ծիծաղում էի ու մոռանում Մանուշակ տատիի ասածը:

Մի անգամ Մարտի 8-ին մի փունջ ձմեռային բերեցի Մանուշակ տատի համար: Հոտ քիչեց ու արտասվաթոր աչքերով ասաց.

Մշո դաշտի խոտը առա, լաո, քրզի մըռնիմ, Սուրբ Կարապետի աջը միշտ քեզի վրա եղնի, բալա:

Մտա տուն, մայրս գյուղից եկել էր: Ողջագործվեցինք, նստեցինք: Մանուշակ տատին նստել էր բազմոցին, մորս կողքին՝ ձմեռայինը ձեռքին ու օրորվելով քթի տակ երգում էր: Մայրս շոյում էր նրա ցամաքած ձեռքը: Երկու մայր՝ մեկը ցավի արձան, մյուսը՝ երջանիկ ու քնքուշ: Այսօր ես և՛ մայր եմ, և՛ տատ: Ամեն Մարտի 8-ին ստանում են ծաղիկներ, ժպտում են ու հիշում Մանուշակ տատի ձմեռայինները, որոնք բուրում էին Մշո դաշտի բույրով, ու լսում էի Մանուշակ տատի մորմոքը.

- Մշո դաշտի խոտը կիզա, լաո՞...

Աննա ԱՅՎԱԶՅԱՆ

ԴԻՄԱՆԿԱՐ

«ԱՄԲՈՂՋ ԿՅԱՆՔՈՒՄ ԱՏԵԼ ԵՄ ԱՆՏԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ...»

ՄԱՅՐ, ԴՈՒ ՀԱՄԱԿ ԱՍՏՎԱԾՈՒԹՅՈՒՆ	
--------------------------------------	--

ՀԱՅՈՒՐԷՆ

ՆՐԱ ԿԵՅՎԱԾՔՆ ԾՐԻՆԱԿԵԼԻ Է ԵՎ ՀԱՅ ԿՆՈՋՆ ԱՐԺԱՆԱՎԱՅԵԼ



Բնությունը կնոջն ասել է գեղեցիկ եղի՞ր՝ եթե կարող ես, իմաստուն եղի՞ր՝ եթե ուզում ես, բայց ողջամիտ լինել՝ դու պարտավոր ես:

Պիեռ Բոմարշե

Կյանքում հաճախ կարելի է հանդիպել այնպիսի մարդկանց, որոնց հետ զրուցելն անզամ մեծագույն հաճույք է պարզապես բեզ: Կարողանում ես կտրվել առօրյա հոգսերից և բավականությամբ ունենալ հաճելի զրուցակցիդ: Մտորում ես. ինչ կլինի, որ շրջապատում բոլորը լինեն ինչպես քո, սիրահարժար և միմյանց հանդեպ դրսևորելի հոգատար և պատրաստակամ վերաբերմունք: Այդպես կյանքն ավելի գեղեցիկ կլինի, իսկ դժվարություններն էլ, թերևս, պակաս կթվալին:

Հիրավի, ապացուցելու կարիք չկա, որ հիմնավոր ժամանակներից ի վեր կյանքն առավել գեղեցիկ է դարձնում կին արարածը: Անամոնապես, հայ կանայք, որոնք մշտապես կարողացել են պահպանել հայ կնոջն արժանավայել կեցվածքը: Յուրաքանչյուր հայուհի մշտապես ցանկանում է լինել գեղեցիկ, նվիրված, խելացի, հպարտ: Կանայք հավատարիմ մնալով իրենց ներհատուկ հատկանիշներին՝ շարունակում են գերել, արարել և հասնել բազում բարձունքների: Կանանց միջազգային տոնական միասնակի կապակցությամբ իմ մեջ

ցանկություն առաջացավ հանդիպել և շնորհավորել մի մարդու, ով արժանի է մեծարման ու գնահատման: Մարդ, որը տարիներ ի վեր աչքի է ընկել իր նվիրվածությամբ ու պարտաճանաչությամբ:

Ասկերանի Գուրգեն Գաբրիելյանի անվան կենտրոնական գրադարանի գլխավոր գրադարանավար Մարիետա Բալասանյանին ճանաչում են շատերը: Գերադասեցի նրա հետ հանդիպել հենց գրադարանում, ուր շուրջ 37 տարի աշխատում է գրքերի մեջ ու ծառայում մանուկներին և երիտասարդ սերունդին: Երբ մտա գրադարան և հայտնեցի իմ այցելության նպատակը, բավական հուզմունք նկատվեց տիկին Մարիետայի աչքերում: Գուրգեն և հոգու խորքում ինձանից սպասում էր նման անակնկալի, չէ՞ որ դեռևս մանկուց գրքի սիրահար էի և գրադարանի մշտական հաճախորդ: Հիշում եմ, թե ինչպիսի մեծ սիրով էի գրադարան հաճախում, ուր տիկին Մարիետան դրսևորում էր ոչ միայն գրադարանավարի հատուկ կեցվածքը: Նրա մանկավարժական տակտը, մայրական գորովալից վերաբերմունքն իմ մեջ իմաստավորված է առայսօր, ու երևի թե այդ է պատճառը, որ հետագայում ընտրել եմ նաև գրադարանավարի մասնագիտությունը: Տարիներ անց աշխատելով Ասկերանի կենտրոնական գրադարանում՝ ավելի եմ համոզվել տիկին Մարիետայի մեծության մեջ: Նրա բարոյահոգեբանական ցայակցությունը (արդեն որպես գործընկերուհի) բազմիցս եմ զգացել ու հիացել նրա պահվածքով, թերևս, հետապետեցված լինելով տարիներին բոլորն էին զգում հոգատարության, փոխըմբռնման կարիք...

Մարիետա Բալասանյանը ծնվել է 1950 թվականի մարտի 6-ին, Ասկերանում: Սկզբնական կրթությունը ստացել է Ասկերանի ութամյա դպրոցում, այնուհետև շարունակել է 1967թ. ավարտել է Ասկերանի շրջանի ԽՍՆԱԿատի միջնակարգ դպրոցը: Նույն թվականին ընդունվել է

երևանի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետի հայոց լեզու և գրականություն բաժինը: 1975թ. համալսարանն ավարտելուց հետո աշխատանքային գործունեությունը սկսել է Ստեփանակերտի շրջսովետի կուլտուրայի բաժնում՝ որպես շրջանային բաժնի գրադարանավար: 1977թ. տեղափոխվել է նշանակվել է Ասկերանի շրջանի ԳԿՀ-ի շրջանային մանկական գրադարանի վարիչ: Շուրջ 17 տարի աշխատել է մանուկների հետ՝ նրանց մեջ սեր սերմանելով դեպի գիրքն ու գիտելիքը և հասկացնելով նրանց, որ աշխարհում ամենագոր զենքը գիտելիքն է:

Աշխատանքին զուգընթաց համատեղությամբ ծավալել է մանկավարժական գործունեությունը: 1978-1983թթ. դասավանդել է Ասկերանի շրջանի հեռակա միջնակարգ դպրոցում:

1995թ. տեղափոխվել է նշանակվել է Ասկերանի մշակույթի բաժնի կենտրոնական գրադարանի սպասարկման բաժնի վարիչի պաշտոնում: 2009թ. տեղափոխվել է նշանակվել է Ասկերանի Գ. Գաբրիելյանի անվան կենտրոնական գրադարանի գլխավոր գրադարանավար:

Հաճելի ու անկաշկանդ զրույցի ժամանակ, որը հետաքրքրությամբ ունենդրում էին նաև գրադարանի մյուս աշխատողները, անմոռանալի հուշերի գիրկն ընկանք: Իրոք, կան մարդուն ի վերուստ տրված բյուր շնորհներ, բնավորության գծեր, որոնցով նրանք տարբերվում են իրարից: Թերևս, տիկին Մարիետային յուրահատուկ են կամքի ուժը, աշխատանքի հանդեպ պատասխանատվությունը, նվիրվածությունն ու աշխատասիրությունը:

Ընտանիք կազմելով Կասյանների հզոր գերդաստանի գավակ Արտյոմ Կասյանի հետ՝ կարողացել են Ասկերանի շրջանում վայելել մեծ հարգանք և սեր: Նրանց ընտանիքում դաստիարակվել է երկու զավակ, որոնք մշտապես ծաղրվել էին զգում կրթության հանդեպ: Հար-

կավ, բոլորը կհամաձայնեն ինձ հետ, որ Կասյան եղբայրներն իրենց ապուլապարհին վայել հետնորդներ դարձան: Այսօր նրանք 33 և ԼԴՅ ՊԲ պատվավոր սպաներ են: Այո, ճիշտ և հայեցի դաստիարակությունը հնարավոր չէ, որ չտա իր արդյունքը, այն էլ այն ընտանիքում, ուր հայրենասիրությունն ու հավատարմությունը վեր են ամեն ինչից:

Արցախյան պատերազմից հետո Կասյանների ընտանիքը, հարմարվելով հետապետեցված դժվարություններին, լծվել էր հայրենի Ասկերանը շենացնելու գործին: Այս ընտանիքում, որտեղ տնօրինում էր ջերմությունը, հավատարմությունը, մեծ ակնկալիքներով էին տրամադրված: 21-ը որ շուտով որդիներն առանձին ընտանիքներ պիտի կազմեին և Արցախի շեն օջախներն ավելացնեին: Ավա՞ղ, ճակատագիրը չկարողացավ այս ընտանիքի հանդեպ մնալ բարյացակամ: Պատերազմի անողոր թողուցիկ անցած Արտյոմ Կասյանը՝ 1998թ. անբուժելի հիվանդության զոհ դարձավ: Թվում էր, թե կյանքը կանգ կառներ Կասյանների օջախում: Ասկերանի ողջ հասարակությունը սգում էր մի անհատի կորուստ, ով հայրենասիրության և բնատուր խելքի մարմնացում էր, ով ասես մի բարձր սար լինելը իր հարագատների, ընկերների համար... Սակայն հայ կնոջ առաքինի կերպարը նորից ի հայտ եկավ և իմաստավորվեց տիկին Մարիետայի մեջ: Նա կարողացավ իր մեջ բավական ուժ գտնել և առաջ նայել՝ թերևս, ամուսնու հիշատակի առջև պարտավորություն զգալով: Այո, պարտավոր էր գավակներին առաջնորդել լուսավոր և արժանի ճանապարհով:

Սահեցին տարիները... Տարիներ՝ շաղախված հաջողություններով և դժվարություններով: Տիկին Մարիետայի որդիներն ընտանիքներ կազմեցին, օջախին արժանի հարսները ընտանիքի մոր համար դուստրեր դարձան: Նրանք գնահատեցին հայուհուն վայել բոլոր ար-

ժանիքներով օժտված կնոջը:

Հիրավի, երբ աստված արարել է կին արարածին, նրան բազում ծիրքեր տալու հետ մեկտեղ, չի զլացել անասան ուժ, հզոր կամք և համբերություն շրայելու: Անավասիկ, իմ հերոսուհին, որն այսօր կարող է միանգամայն ասել. «Ես հասել եմ իմ նպատակներին, կրթել և դաստիարակել եմ իմ երկրին արժանի գավակներ և շարունակում եմ նույն ոգով դաստիարակել թոռներին»:

Այսօր ես այնքան երախտապարտ եմ և գոհ, որ գնահատված եմ հասարակության կողմից, որ արժևորված է գրադարանավարի աշխատանքը: Միշտ էլ հաճույքով եմ աշխատել մանուկների հետ և ամեն կերպ ցանկացել նրանց մոտ ավելի անարագորդել սերը դեպի գիրքը, կրթությունը: Մեր երկրի ապագան այսօրվա մատաղ սերունդն է, որի հանդեպ պետք է դրսևորեն ամենաուշադիր և ամենանբանական վերաբերմունք: Այնպես անենք, որ նրանք հասկանան, որ իրենք են այսուհետ տերն Արցախ աշխարհի:

- Այս գեղեցիկ տոնի առթիվ ցանկանում եմ շնորհավորել բոլոր կանանց և մադթել, որ միշտ լինեն հմայիչ, ողջամիտ և երբեք չկորցնեն իրենց կանացիությունը,- ասաց Մարիետա Բալասանյանը:

Հիրավի, մեծ տպավորություն ստացա իմ հանդիպումից: Անցյալի և ներկայի հուշերն իրար միահյուսված՝ թևածուռ էին գրադարանի ջերմ մթնոլորտում: Այնքան մեծ ոգևորություն և խանդաղատանք էր նկատվում ամենքի դեմքին: Աշխատողները նույնպես հիացած լսում էին ավագ գործընկերոջը՝ միանշանակ դասեր քաղելով նրա խորհուրդներից ու բազում պատմություններից:

Շնորհավոր տոնը, սիրելի Մարիետա: Քեզ ամուր առողջություն, և թող հայ կնոջն արժանավայել և օրինակելի թո կեցվածքը միշտ անսասան լինի:

ԿՈԿԻԿ ԵՎ ՔՆԵՈՒՇ, ՆՐԱՆԱԿԱՏ ԵՎ ՍԻՐԱԼԻՐ

Կին... Այս մի հատիկ բառի մեջ այնքան խորունկ իմաստներ են ներառված, այնքան հույզեր ու անեղծվածներ, այնքան զոդտրիկ մտքեր ու ցանկություններ: Յուրաքանչյուր կնոջ մեջ կարելի է տեսնել առանձնահատուկ քնքշանք, նրբություն, գեղեցկություն, իսկ կանացի սեքսեթանքը կնոջ անբաժանելի ու հավատարիմ ընկերն է եղել մշտապես: Սակայն ամենամեղմ ու ամենականացի կնոջ մեջ արքայավայել մտածած է կամքի հզոր ուժ, քաջություն ու ակնբախ հայրենասիրություն:

Դեռևս վաղընթացում տարիներից հայ կինը կարողացել է ապացուցել, որ իր ազգի արժանի դուստրն է, որ կարողացել է զօր ու գիշեր մաքառել տղամարդկանց կողքին՝ երբեք չզիջելով առաջին գիծը: Այսօր էլ մեր շրջապատում տեսնում ենք այնպիսի կանանց, որոնց հանդեպ անսահման սեր և հարգանք ենք տածում, արժևորում նրանց ավանդը: Խոնարհվելով արցունքի ու ցավ տարած բոլոր հայ կանանց առջև՝ նրանց տալիս ենք մեծարանքի ու ակնածանքի մեր խոսքը: Հիրավի, բոլոր հայ կանայք արժանի են ուշադրության և վաստակել են երջանիկ լինելու իրավունքը:

Գեղեցիկի, սիրված լինելու, հրաշքի սպասման, հաճելի խոսքեր լսելու, հավերժականի մասին մտածելու խորհուրդ ունի կանանց նվիրված միամտակը, որը նաև զարթոնքի ազդարարում է: Աստի ու մեր կինն ու գարունը չեն տարբերվում միմյանցից: Գարունը հենց կինն է՝ միշտ ծաղկող, փթթուն, կինն էլ իր եղբայրն է գարունն է որ կա. հանելուկներով ու անակնկալներով լի:

Հիշում եմ, երբ դպրոցահասակ էինք, մեզ համար գեղեցկության և կանացիության մարմնացումը մեր ուսուցչուհիներն էին: Նրանք մաքրության, գեղեցկության և նրբակերտության խորհրդանիշ էին սովորողներին համար, մենք ոչ միայն հիանում էինք նրանցով և ցանկանում՝ ընդօրինակել, այլև անթա-

քույց սիրում էինք նրանց:

Ամալյա Շիրոյան: Ասկերանի է. Բարսեղյանի անվան միջնակարգ դպրոցի հարգված ուսուցչուհի: Կոկիկ և քնքուշ, նրբանկատ և սիրալիկ. ահա այսպիսին են հիշում ընկեր Շիրոյանին: Նրա հետ ունեցա հաճելի առանձնագրույց, որը նաև հոգեբանության յուրօրինակ դաս լինելու ասես:

- Ընկեր Շիրոյան, նախ շնորհավորելով Ձեզ՝ կանանց միամտակի կապակցությամբ, կցանկանայի լսել Ձեր կարծիքն այս տոնի վերաբերյալ:

- Նախ բնությունն ինքն է շնորհավորում գեղեցիկ այս տոնը՝ զարթոնքի ու արարման իր հրաշալի ծեսով, որն ասես փոխանցվում է բոլորին, խառնվում նրանց ժայտներին, ծառագույն աչքերի մեջ: Բազմաթիվ տարիներ աշխատելով երեխաների հետ՝ չեմ կարող ցանկանալ մեծ տոն չկապել նրանց հետ: Ինձ համար իմ երեխաները մնան են ծյունաթաթախ, ծյունաթուր, ծյունահոտ ծաղիկ:

Կինը սեր է, ջերմություն, գեղեցկություն: Կյանքի իր ճանապարհը կինն անցնում է սիրելով: Չմայած այդ ճանապարհը նրան բերում է և անպակաս գիծ երջանկություն, և հորիզոններ հաղթահարելու ամենագորություն, և տառապանք, ճիշ, ընդդուրն աշխարհի, մարդու, ինքն իր դեմ: Տառապանքի ու երջանկության մշտնջենական այդ հակամարտությունում հաղթում է կինը: Բյուրեղանում է, բարձրանում՝ ձգտելով լինել, կայանալ:

- Արցախցին անցել է դժվար և դաժան ճանապարհ: Ի՞նչը մեզ հայ պահեց, և ինչի՞ հասանք:

- Այն դժնդակ օրերին, երբ մարդիկ միաբռնուցք ոտքի էին կանգնել, երբ չկար իմ ու թո՛ւ զաղափարը, ամեն ինչից վեր կանգնած էր մարդկային մի համերաշխություն, մտքերի ու հույզերի զարմանալի մի ընդհանրություն:

Ճակատագիրը դաժանորեն զետնով տվեց

ին ժողովրդին. երկրաշարժ, պատերազմ: Այնուամենայնիվ, հայը կանգնեց ճակատագրին դեմ հանդիման՝ հաղթելու հաստատակամությամբ:

Կործանվում է նա, ով կորցնում է երազի ճամփան: Մեր մասին ասում են, որ մենք երազող ժողովուրդ ենք: Փառք ասած, որ դա համապատասխանում է իրականությանը: Այսօր, մենք պարտավոր ենք մտածել մեր երկրի ապագայի, այն շենացնելու մասին: Իսկ մեզ՝ ուսուցիչներին, վերապահված է ամենակարևորը. ճիշտ դաստիարակել մատաղ սերունդին, երեխային անկաշկանդ ու ինքնաբերական խոսել և գրել սովորեցնել, նրա մեջ բարձրացնել սերը գիտելիքի հանդեպ: Մենք պետք է կարողանանք երեխաների մեջ սեր սերմանենք աշխարհի ու մարդու նկատմամբ:

- Ձեր ակնհայտ նրբանկատությունը, կյանքի փորձն ու հոգատարությունը դիմացինի հանդեպ հայտնի է շատերին, միաժամանակ Ձեզ հաստակ են ճշմարտախոսությունն ու տեղին քննադատությունը: Ի՞նչ կասեիք սկսնակ ուսուցիչների մասին:

- Ինքնին հասկանալի է, որ ապագան երիտասարդներինն է և, իմ կարծիքով, այսօր այն ապահով ձեռքերում է: Մեծագույն բերկրանք են զգում, երբ տեսնում են, թե ինչպիսի ոգևորությամբ են սկսնակ ուսուցիչները մղվում աշխատանքին: Նրանք անընդհատ խորհրդակցում են փորձառու ուսուցիչների հետ՝ լսում նրանց խորհուրդները և հաշվի առնում: Նրանցից յուրաքանչյուրը ցանկության, հաստատակամության, ստեղծագործական ակյուն ունենալու դեպքում կարող է դառնալ ինքնուրույն, անկրկնելի մասնագետ և անձնավորություն:

- Դուք հայոց լեզվի և գրականության հիանալի մասնագետ եք, ի՞նչը մեզ Ձեզ նախընտրելի հենց այդ առարկան:

- Գրականությունը և գիտությունն է, և՛ ար-



վեստ: Այդ առանձնահատուկությամբ է պայմանավորված գրականության ուսուցչի մասնագիտությունը: Գրականությունը մարդու հատկություն է, իսկ գրականության ուսուցիչը մտքի ու սրտի մարդ է, քանզի նա հստակ պետք է պատկերացնի մարդուն: Գրական ստեղծագործության օրինակները զուգորդվում են իրական կյանքի հետ՝ գրականության դասերը դարձնելով կյանքի դասեր:

- Ձեր բարեմադրանքը կանանց: - Այս հիասքանչ տոնի առթիվ ցանկանում եմ բոլոր կանանց խաղաղություն: Թող այլևս ոչ մի մայր չարտասալի, ու անձնական երջանկությունն ուղեկցի բոլորին: Կանայք լինեն մշտապես գնահատված, սիրելի ու քնքուշ: Հիրավի, կինն արժանի է ամենամեծ ուշադրության ու արժևորման:

Արդարև, արժանապատվությունը ձեռքբերվելի չի լինում: Այն մարդուն տրվում է ի վերուստ, և փառք ու պատիվ այն մարդուն, ով ամբողջ կյանքում ապրում է հավատարիմ իր եղբայրն՝ բարձր պահելով արժանապատվությունը:

ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ

ԵՐԵՒԱՆԵՐԻ ԽՈՍՔԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ

Մայրենի լեզվի ուսուցման հարցը եղել է մնում է մանկավարժության հիմնական խնդիրներից մեկը, որովհետև մայրենի լեզվի ուսուցումը երկարաժամկետում ունի այն թե՛ որպես գիտելիքների ձեռքբերման միջոց, մեծապես նպաստում է երեխայի հոգևոր ուժերի զարգացմանը, նրա՝ որպես հասարակության անդամի, մարդ-քաղաքացու ձևավորմանը:

Մայրենի լեզվով երեխան ամեն ինչ հեշտ ու արագ է ստանում ու յուրացնում, ուստի և, ավելի լավ, ավելի բազմակողմանի ու խոր զարգացում ու առաջընթաց է ապրում:

Մայրենի լեզվի ուսուցման բնագավառում առաջին քայլերը երեխան անում է ընտանիքում՝ ծնողների ու մեծերի շրջապատում, նրանց հսկողությամբ ու աջակցությամբ: Այս առումով լեզվի ուսուցման համար երեխայի կրտսեր տարիքը անփոխարինելի մի ժամանակաշրջան է. այդ տարիքում երեխան երբեմն իր համար էլ աննկատելի կերպով, հազարավոր նոր բառեր, արտահայտություններ ու դարձվածքներ է սովորում, տարերայնորեն սեփականում մայրենի լեզվի այն բնական ատաղձն ու յուրահատկությունները, որոնք հաճախ շատ մեծ ջանքերի գնով է հաջողվում ավելի բարձր տարիքում: Այս հանգամանքը պետք է հաշվի առնել և ժամանակին ու ճիշտ օգտագործել երեխայի տարիքային առանձնահատկությունների ընձեռած ուսուցողական մեծ հնարավորությունները՝ նրա մեջ լեզվագաղտություն մշակելու, մտածողություն ու խոսքի զարգացումը ճիշտ էրևցնել մեջ դնելու համար: Երեխաների խոսքի ու մտածողության զարգացման համար բացառիկ նշանակություն ունի ընտանիքը, որովհետև մայրենի լեզուն նա սկզբնապես սովորում է ընտանիքում, իսկ լեզվի հետ ձևավորվում է նաև նրա մտածողությունը: Ընտանիքում սովորածն է, որ հետագայում հինք է դառնում կազմակերպված ուսուցման համար, մշակվում ու կատարելագործվում է դպրոցում: Առանց ընտանիքի տված լեզվական հիմքի դպրոցի գործը շատ կոշտ կարգանա, այդ պատճառով էլ ընտանիքում երեխայի խոսքի զարգացման վրա լուրջ ուշադրություն պետք է դարձնել:

Ինչպես Միքայել Նալբանդյանն է նկատել՝ հայրենի հարկի տակ հնչող մայրենի խոսքը բացառիկ կարևոր դեր կարող է խաղալ երեխայի լեզվի ու մտածողության մշակման ու զարգացման գործում: Դեռևս այստեղ՝ հայրենի հարկի տակ, մայրական կաթի ու գուրգուրանքի հետ է, որ երեխայի մեջ ձևավորվում է սկզբնական լեզվագաղտությունը: Ուստի ամենևին էլ պատահական չէ, որ Նալբանդյանը վճռականորեն բողոքում էր հայ ընտանիքներում օտար լեզվով խոսելու արատավոր սովորության դեմ, որովհետև այդպիսի ծնողները խախտում են երեխայի հոգեկան զարգացման բնական ընթացքը, աղճատում նրա լեզուն ու մտածողությունը և ազդի տալիս «կեղևով միայն հայ զավակներ»:

Երեխայի խոսքի ու մտածողության մշակումն ու զարգացումն ամեն մի ընտանիքի ու ծնողի գլխավոր հոգսը պետք է լինի՝ սկսած

նրա առաջին թրթվանքից մինչև ինքնուրույն կապակցված խոսքի ստեղծումը, բառը ճիշտ արտասանելուց ու տեղին գործածելուց մինչև խոսքի գեղեցկացումը: Դեռևս հարձակ յուրաքանչյուր ծնողի համար հույժ անհրաժեշտություն է լավ իմանալ այն բոլոր միջոցներն ու ձևերը, մեթոդական գոնե այն պարզ եղանակներն ու հնարները, որոնք հարկավոր են երեխայի խոսքի մշակման ու զարգացման համար: Այդ միջոցներից ամենահիմնականը ընտանիքում հնչող խոսքն է, ծնողների ու ընտանիքի մյուս չափահաս անդամների խոսքի մաքրությունը, ճշտությունն ու գեղեցկությունը: Ինչպես ընտանիքում են խոսում, այնպես էլ այդ ընտանիքի երեխաներն են խոսում՝ սովորելով մեծերից, ընդօրինակելով նրանց խոսքն ու խոսելու եղանակը:

Ամեն օր լսելով իրեն շրջապատող մարդկանց կանոնավոր ու գեղեցիկ գրական խոսքը՝ երեխան մեծապես ազդվում է դրանից, ընդօրինակում և սեփականում է այն: Երեխայի հետ խոսելիս թե՛ նրան դիտարկելու ամեն ինչ, որևէ հետ զրուցելիս թե՛ նրա համար որևէ բան պատմելիս ծնողը միշտ պետք է հատուկ ուշադրություն դարձնի իր խոսքին՝ հետևի բառերի ծանր ու հասկանալի լինելուն, մտքերի պարզությանն ու մատչելիությանը, լեզվի կանոնավորությանն ու գեղեցկությանը: Պետք է ընտանիքի յուրաքանչյուր չափահաս անդամ այս հարցում իրեն պատկերացնի որպես ուսուցիչ, սովորեցնող, խոսքի կենդանի օրինակ տվող և, ըստ այդմ, մաքրի, կանոնավորի ու գեղեցկացնի իր խոսքը: Սխալ են այն ծնողները, ովքեր երեխայի հետ աղավաղված, ինչպես ստում են՝ «ժողի լեզվով» են խոսում: Երեխան միշտ պետք է լսի մաքուր, ճիշտ ու հստակ խոսք, որովհետև այն ընդօրինակվելու է:

Երեխայի խոսքի մշակման ու զարգացման համար կարևոր նշանակություն ունի նաև նրա խոսքի անընդհատ հղկումն ու կատարելագործումը: Դրա համար պետք է երեխային խոսեցնելու, պատմելու ու արտահայտվելու հնարավորություն տալ, որպեսզի նա վարժվի խոսելու մեջ և երկրորդ՝ հնարավոր դառնա նրա լեզվակազմ-արտասանական թերություններն ի հայտ բերել և դրանց վերացման ու ճշտման ուղղությամբ անհրաժեշտ աշխատանք տանել: Հաճախակի կրկնվող ակտիվ երկրորդային զրույցի դեպքում երեխան ոչ միայն հարցեր է տալիս, այլև հաճույքով ու պատրաստակամությամբ պատասխանում է տրված հարցերին, ընդարձակ ձևով պատմում է իր տեսածի, լսածի ու զգացածի մասին: Ծնողները պետք է անպայման ժամանակ հատկացնեն երեխաներին՝ նրանց «բլբլոցը» լսելու, թույլ տված սխալներն ուղղելու, այդ ընթացքում նոր բառեր ու արտահայտություններ սովորեցնելու համար: Այսպիսի փոքրիկ «գոհողությունները» երբեք զուր չեն անցնում և անփոխարինելի մշակակություն են ունենում երեխաների համար ոչ միայն նրանց լեզվի ու մտածողության զարգացման, այլև դաստիարակության համար՝ հատկապես երեխաների ու ծնողների միջև ամուր կապ ստեղծելու առումով:

Փոքրիկների պատկերացումներն ու բառապաշարը հարստաց-

նելու, նրանց մեջ կապակցված խոսք կառուցելու կարողություն մշակելու, ինչպես նաև ընդհանրապես խոսելու արտահայտվել սովորեցնելու տեսակետից խիստ օգտակար պետք է համարել նաև թե՛ մատիկ նկարների, դիաֆիլմերի, մուլտիպլիկացիոն ու մանկական կինոնկարների, տեսագրությունների և այլ ցուցադրական նյութերի դիտումները: Այդպիսի ցուցադրումների ժամանակ ևս ծնողները պետք է վերահսկողի, առաջնորդողի ու կողմնորոշողի դերում լինեն:

Շատ արժեքավոր ու օգտակար պետք է համարել տիկնիկային ու թատերական ներկայացումների դիտումները, որոնք ոչ միայն որոշակի բովանդակություն, այլև պատրաստի լեզվական ձևեր են տալիս երեխաներին, սովորեցնում են գեղեցիկ խոսք կառուցել, տիրապետել խոսքարվեստին: Այս դեպքում երեխան շփվում է կենդանի խոսքին, մտովի հաղորդակցվում է դերակատարների հետ, ընդօրինակում նրանց գեղեցիկ արտահայտություններն ու խոսքի հնչեղանքը, բառերն ու արտասանության եղանակը:

Երեխաների խոսքի զարգացմանը մեծապես նպաստում է հեթիաթներ ու պատմություններ պատմելը: Դեթիաթների ու փոքրիկ պատմությունների ունկնդրումը նրանց համար հաճելի զբաղմունք է և սակայնակ ուսուցողական արժեք ունի ոչ միայն խոսքի զարգացման, այլև աշխարհաճանաչողական տարաբնույթ գիտելիքների ու տեղեկությունների ձեռքբերման առումով: Ծնողները պարտավոր են ազատ ժամերին երեխաների համար գեղեցիկ հեթիաթներ ու կարճ մանկական պատմվածքներ, հետաքրքրաշարժ նյութեր կարդալ կամ պատմել և ապա հետևել, որ նրանք վերարտադրեն ստացած տպավորությունները, դրանց կապակցված խոսքի տեսք տան: Այս աշխատանքը մեծապես կնպաստի նաև երեխաների գեղագիտական ճաշակի մշակմանը՝ նրանց գեղեցիկ օրինակ տալով, հաղորդակից դարձնելով խոսքարվեստին:

Երեխաների խոսքի զարգացմանն ու գեղարվեստական ճաշակի մշակմանը նպաստում են բանաստեղծությունների անգիր անելն ու երգերի ուսուցումը: Ուսանավորները երեխաներին սովորեցնում են զգալ խոսքի ռիթմն ու երաժշտությունը, գեղեցկությունն ու բարեհնչունությունը, դրանք երեխաներին տալիս են կապակցված բառեր, արտահայտություններ ու գեղեցիկ պատկերներ:

Խոսքի ու մտածողության զարգացման տեսակետից երեխաներին շատ բան կարող են տալ այցելությունները՝ թանգարաններ, պատկերասրահներ, ցուցահանդեսներ: Այս միջոցառումները երեխաների համար հսկայական ու անփոխարինելի մշակակություն կունենան նրանց մտավոր պաշարի հարստացման, գեղագիտական ճաշակի ու խոսքի մշակման համար:

Խոսքի զարգացման տեսակետից բացառիկ արժեք ունեն բնության գրկում անցկացվող զբոսանքներն ու դեպի բնություն կազմակերպվող նպատակային էքսկուրսիաները:

Բնության գրկում եղած ժամանակ երեխաների մեջ տասնյակ

հարցեր են ծնվում շրջապատի առարկաների, երևույթների, գույների ու ձայների վերաբերյալ, դրանց ամենայն համբերատարությամբ, մտածված ու մատչելի ձևով պետք է պատասխանել:

Երեխաների խոսքի զարգացման ուղղությամբ տարվող աշխատանքներում հատուկ ուշադրություն պետք է դարձնել բառերի ու արտահայտությունների ճիշտ ու տեղին օգտագործմանը, որովհետև առանց գործուն միջամտության, ինքնահոսի թողնելով, դրանք շատ ուշ կարող են վերածվել կարողության, այնինչ անհրաժեշտ է, որ լեզվական կարողությունները երեխայի մեջ ձևավորվեն հնարավորին չափ արագ ու հեշտ, որպեսզի սովորած ամեն մի նոր բառ ու արտահայտություն անմիջապես մտնի երեխայի գործուն բառապաշարը, դառնա հաղորդակցման միջոց: Եթե երեխային շրջապատող մարդկանց խոսքին առաջադրվող պահանջներում կհիմնականը նրա պարզ, մատչելի, գեղեցիկ, հակիրճ ու դիպուկ լինելն է, ապա այս աստիճանում երեխայի խոսքին առաջադրվող ամենահիմնական պահանջը նրա ճշտությունն է: Խոսքի ճշտությունը նրա զարգացման ու առաջընթացի, նրա լեզվական հիմնական գործառնության ճիշտ ու անթերի դրսևորման առաջին պայմանն է: Եթե խոսքը ճիշտ չէ, ուրեմն, այն չի կարող ճիշտ արտահայտել մարդու մտքերն ու զգացմունքները և հետևաբար՝ դիմացինին հաղորդել, փոխանցել դրանք: Այս առումով երեխայի ասած ոչ մի բառ ու նախադասություն անուշադրության չպետք է մատնել: Եթե այն լեզվական կամ արտասանական տեսակետից ճիշտ չէ, ուրեմն՝ հաղորդակցման իր գործառնություն չի արժեք կատարել չի կարող: Սկզբում կարելի է բավարարվել միայն սխալ ասածը ճշտելով ու այդ ճիշտը երեխային կրկնել տալով: Սակայն երեխայի խոսքի ու մտածողության զարգացմանը զուգընթաց պետք է անցնել նաև լեզվական սխալների ուղղման ավելի գործուն ու արդյունավետ ձևերի գործադրմանը:

Նախադպրոցական և կրտսեր դպրոցական տարիքում շատ օգտակար կարող է լինել երեխայի խոսքի գեղեցկացման ուղղությամբ տարվող աշխատանքը: Այն կարելի է սկսել երեխային շրջապատող ծանոթ առարկաների ու երևույթների հատկությունները նկատել տալուց, այդ առարկաներին ու երևույթներին համապատասխան հատկանիշներ վերագրելուց՝ վարդ կարմիր է, սպիտակ է, դեղին է, հոտավետ է, բացված է, գեղեցիկ է, փշոտ է, կոկոն է... և կամ՝ դեղին վարդ, սպիտակ վարդ, հոտավետ վարդ...

Ամենօրյա ուշադրությունն ու հսկողությունը երեխայի խոսքի նկատմամբ անպայման իր արդյունքը կտա, և նա, իր առաջին թրթվանքներից սկսած, կսովորի ճիշտ ու գեղեցիկ խոսել, զգալ իր մայրենի լեզվի գեղեցկությունն ու հարստությունը, ապրել դրանով, իր համար այն գեղեցիկ դարձնել կյանքի պայքարում:

**Պայանե ՍՈՂՈՍՈՆՅԱՆ
ՀՀ ԿԵՆ ԿԱԻ ԼՂՀ
մասնաճյուղի գրականության
մասնագետ**

**ՈՎ ԶԻ ԻՄԱՆՈՒՄ ՈՒ
ԳԵՆԱՅՏՈՒՄ ԻՐ
ԱՆՅԱԼԸ, ԶԻ ՈՒՆԵՆԱ
ՀՈՒՍԱԼԻ ԱՂԱԳԱ**

Տփղայի... Նվիրական ու քրթաբույր ամուսն ամբողջ հայության համար, ամուսն, որ խորհրդանշան է հայ ընթացող գոյության:

Ստեփանակերտի Ա. Սախարովի անվան հ. 8 ավագ դպրոցի 11-րդ դասարանի աշակերտները դատել է Գասպարյանի և պատմության ուսուցիչներ Լ. Մարտիրոսյանի, Գ. Պողոսյանի ղեկավարությամբ զարմանալի արձակուրդի առաջին օրը կազմակերպեցին էքսկուրսիա Ասկերանի շրջանի Ծաղկաշատ գյուղում գտնվող անվանի հայդուկապետ Նիկոլ Դումանի տուն-թանգարան: Երեխաների տպավորություններն անչափ վառ ու գունեղ էին: Նրանք շատ տեղեկություններ իմացան ազգային-ազատագրական շարժման գործիչ, հայտնի ֆիդայի, մեր համերկացի Նիկոլայու Տեր-Յովհաննիսյանի կյանքի, գործունեության, անցած փառավոր մարտական ուղու մասին: Երեխաները տեսան և նույնիսկ շոշափեցին նրա ձեռք-գլխամբերքը, հազուստը, քարտեզները, որոնցով նա առաջնորդվել է մարտի դաշտում, ճանաչեցին մեծ հայդուկապետին, տեսան այն տունը, որտեղ ծնվել, մեծացել և դաստիարակվել է ազգային մեծ գործիչը: Նրանց վրա մեծ տպավորություն թողեց տան կահավորումը՝ ազգային ավանդական կահ-կարասին, կարպետները, այգում կախված խնոցին, նկուղում տեղադրված ճախարակը, բուրդ գգելու սանրը (սանդեքը), կրակ թեժացնելու փուքսը, տրեխները, տանը կից թոնրատունը, մառանը և տարբեր աշխատանքային ու կենցաղային իրեր, որոնց մասին նրանք գիտեին միայն գրքերից: Թանգարանի յուրաքանչյուր անկյունից զգացվում էր հայկական ավանդական շուքն ու ոգին: Այնուհետև տուն-թանգարանի բակում կազմակերպեցին բաց դաս՝ նվիրված Նիկոլ Դումանին: Դասը Միեր Գասպարյանը սկսեց ֆիդայական երդման խոսքով:

- Երբվում են իմ պատվի ու ազգության վրա, իմ բոլոր ուժով, եթե հարկ լինի՝ նաև իմ արյունով ծառայել Հայաստանի ազատագրության դատին՝ ընդդեմ սուլթանի բռնակալության: Այստեղ իմ բարձր Հայաստանի լեռները կլինեն և իմ ամենամեծ բաղձանքը՝ հայրենիքի համար մեռնելը: Բարով արժանանամ հրեղեն գնդակի համբույրին:

Աշակերտները, մեկը մյուսին շարունակելով, ներկայացրին Նիկոլ Դումանին՝ ինքնակենսագրական տվյալներից մինչև թուրք զավթիչների դեմ մղած եռանդուն պայքարը (1894-1896) Արևմտյան Հայաստանում (Վան, Կարին, Տրապիզոն): Մամրամասն նշեցին, թե ինչպես է նա կազմակերպել 1897թ. հունիսի 25-ի համատրի արշավանքը և վրեժ լուծել քրդական մագրիկ ցեղերից: Ներկայացրին 1905-1906թթ. հայ-թաթարական (աղբերջանական) ընդհարումների ժամանակաշրջանի ամբողջ կողորհող և նրա ակտիվ մասնակցությունը 1910թ. Կոպենհագենի 2-րդ կոնգրեսին: Երեխաները հուզմունքով ու ափսոսանքով նշեցին, որ Դումանը ինքնասպան է եղել 1914թ., Բաքվի Լարինովի անվան հիվանդանոցում: Երեխաների այն հարցին՝ «Ինչու՞ ինքնասպան եղավ Դումանը», մենք պատասխանեցինք. «Դումանը հեղափոխական էր ամբողջ էությամբ, նա չէր հասկանում կյանքն առանց հեղափոխական գործունեության և միշտ կրկնում էր, թե մարդ 50 տարեկանից անց արդեն անպետքական

ՆԱԽԱՁԵՆՈՒԹՅՈՒՆ

ՈՐ ՄԻԱՆԱՆԷ՝ ԿՈՒԺԵՂԱՆԱՆԷ

Վերջերս Քաջաթաղի շրջանի Սարատակի միջնակարգ դպրոցի (տնօրեն՝ Գևորգ Դավթյան) աշակերտները և ուսուցիչները բարեկամական այցով եղան Ստեփանակերտի 3ովհաննես Թումանյանի անվան հ. 9 միջնակարգ դպրոցում (նախաձեռնությամբ կրթության բաժնի տարրական դասարանների գծով տեսուչ Ս. Թամազյանի):

Տառապանքի իր ազգին բաժին ընկած բարբարոսական սպանդի համար հայրենասեր-մայրը չի մոռանում նաև կյանքի գեղեցկությունների մասին, ստեղծում է հուշ-թանգարանը՝ երգելու նաև ի փառք կյանքի, սիրո, մարդկայնության. նա ամենևին չի կորցնում հույսն ու հավատը:

Այցը հետաքրքիր էր ու բովանդակալից: Այն սուկ երկու դպրոցների միջև ծանոթության և լավագույն նախաձեռնությունների նպատակ չէր հետապնդում, այլ՝ սրտանց խոսելու, իրար ավելին պատմելու, ոգեկոչելու, ներկայացնելու:



Օրվա խորհուրդը վեհ էր ու վստահալից: Դպրոցի փառքի սրահում արիության դաս էր, հավաքվել էին հյուրեր, ուսուցիչներ, աշակերտներ՝ իրենց հարգանքի տուրքը մատուցելու Արցախյան ազգային-ազատագրական պայքարի զոհերի հիշատակին: Աշակերտները մեկ անգամ ևս ապացուցեցին, որ կարող են հաղթել ոչ միայն զենքով, այլև՝ իրենց հոգեթով երգով, գրչով և իրական, փառապանծ հզոր բանակով:

Շարժման մասնակիցներից է և տառապանքի փորձ ունի, նշեց, թե ինչպես է փորձել պաշտպանել իր ազգի իրավունքը, անմնացորդ նվիրվել ազգային հարցին, և այն տղաները, ովքեր անմահությամբ հաղթեցին մահին, նրանց և՛ փառք, և՛ օրհնանք...

Փառքի սրահում սուրբ նահատակների լռին ու խոսուն նկարների առջև դպրոցի սաները խոնարհվում և երգում են հայրենասեր զինվոր դառնալ և սրբությամբ ծառայել հայրենիքին, պահել-պահպանել այն հողը, որի համար կյանքեր են նվիրաբերվել:

Դպրոցի տնօրեն Արթուր Անտոնյանը ողջունեց միջոցառման մասնակիցներին, ջերմ ընդունելության արժանացրեց նրանց և ասաց, որ ինչքան էլ պայծառ լինի ներկան ու ավելի վառ՝ ապագան, այնուամենայնիվ, չպետք է մոռանանք նրանց, ում ջանքերով ստեղծվել է նոր կյանք: Եվ արյան գնով ձեռք բերած այսօրվա լուսաշող օրը Սարատակի միջնակարգ դպրոցի աշակերտները եկել են իրենց բարեկամական ձեռքը մեկնելու մեզ, եղբայրանալու, ընկերանալու և ջերմացնելու մեր սրտերը: Այնուհետև դպրոցի դահլիճում ելույթ ունեցան մեր դպրոցի կրտսեր և միջին դասարանների սաները: Աշակերտները ողջունելի խոսք հղեցին հյուրընկալ դպրոցի իրենց հասակակիցներին, բացատրեցին «ընկեր» բառի իմաստը և միմյանց հետ բարեկամանալու մասին ցանկություններ մտաբեցին՝ Դառնանք մտերիմ ու լավ ընկերներ, Միասին փնտրենք ուսման ուղիներ,

Ստեփանակերտի քաղաքապետարանի աշխատակազմի կրթության և սպորտի բաժնի վարիչ Կառլեն Մարգարյանն իր խոսքում նշեց, որ շատ ցավ ու արհավիրք է տեսել հայ ժողովուրդը, բայց ամրակուռ է նրա ոգին: Եվ այսօրվա համատեղ միջոցառումն էլ հենց այդ նպատակին է ծառայում, որ բարեկամության հիմնաքարն արդեն դրված է:

Կակիծով, խոր ցավով ու մորմոքով է անցյալը ներկայացնում նաև զոհված ազատամարտիկ Դավիթ Հակոբյանի թուր Մարինե Հակոբյանը և անհայտ կորած ազատամարտիկների հարազատների միության նախագահ Գայա Առստամյանը: Կարոտից տոչորվող մոր խոսքերից իմացանք, որ որդու կարոտը տանջում է իրեն, նրա սիրտը միշտ լցված է հայրենիքի սիրով, անհագ կարոտով, ականջը՝ ձայնի...

Բարեկամանք, այցելեք իրար եվ միությունը պահպանենք երկար: Յետո «Չարածճի ճուտիկը» տիկնիկային ներկայացմամբ հանդես եկան 3-րդ և 4-րդ դասարանների աշակերտները, իսկ 3. Թումանյանի «Կիկոսի մահը»՝ 5-րդ և 6-րդ դասարանի սաները:

Բարեկամ երկու դպրոցներն էլ միմյանց գրքեր նվիրեցին, իսկ 9-րդ դպրոցին՝ նաև պտղատու ծառերի տնկիներ: Տնօրենը հավաստիացրեց, որ տնկիներն իրենց տեղը կգտնեն դպրոցամերձ հողամասում:

Փոխնախարար Ս. Համբարձումյանը նույնպես գրքեր և «Արցախի քառուղիներում» սկավառակներ նվիրեց դպրոցներին և խրախուսեց նմանօրինակ աշխատանքը մատաղ սերնդի կրթության և դաստիարակության գործում՝ ասելով, որ այս կապը այսուհետ կարելի է համարել ոչ թե բարեկամական, այլ՝ եղբայրական:

9-րդ դպրոցից հեռացանք այս անգամ Քաջաթաղում հանդիպելու ակնկալիքով:

Օրվա խորհուրդը եզրափակվեց Արցախի զոհված ազատամարտիկների հուշ-թանգարան այցելությամբ: Երեխաները տեսան, թե ինչպիսի խնամքով ու հոգատարությամբ են պահպանվում սուրբ նահատակների անձնական իրերն ու լուսանկարները, ինքնաշեն ատրճանակներն ու երաժշտական գործիքները:

Իբրև հուշ, թանգարանի տնօրեն Գ. Առստամյանը իր «ԼՂՀ ազգային-ազատագրական պայքար 1988-2009» գրքերից նվիրեց այցելուներին:


Օրն այս հիշարժան դեռ երկար կմնա երեխաների և միջոցառման մասնակիցների հուշերում:

Տոնդարձի ճանապարհին երեխաներին մեկ այլ անակնկալ էր սպասվում: Եղանք Շուշիի «Սուրբ Դավթյանցեցոց» եկեղեցում և Աստուծո օրհնությամբ վերադարձանք Քաջաթաղ:

Սարատակի միջնակարգ դպրոցի տնօրեն Գ. Դավթյանը, ուսուցիչներն ու աշակերտները և տղերիս հեղինակը խորին շնորհակալություն են հայտնում փոխնախարար Ս. Համբարձումյանին, Քաջաթաղի շրջվարչակազմի ղեկավար Ս. Խաչատրյանին այս հետաքրքիր ու բովանդակալից նախաձեռնությունը կյանքի կոչելու համար:

Սիրվարդ ԹԱՄԱԶՅԱՆ
Քաջաթաղի շրջվարչակազմի կրթության բաժնի առաջատար մասնագետ

Խոսք հիշատակի ՎԱՆՅԱՎԱՐԵԳԻՆԻ ԱՎԱՆԵՍՅԱՆ



Մարտի 22-ին կյանքից հեռացավ ԼՂՀ անվանի գիտնական, տեխնիկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ճարտարագիտության ամբիոնի նախկին վարիչ Վանյա Գարեգինի Ավանեսյանը:

Ծնվել է 1934թ. նոյեմբերի 19-ին, Ստեփանակերտ քաղաքում: 1952թ. ավարտել է հ.2 միջնակարգ դպրոցը: Լույսն թվականին

ընդունվել է Ադրբեջանի Ազիզբեկովի անվան արդյունաբերական ինստիտուտը, որն ավարտել է 1956-ին:


1957-62թթ. աշխատել է Բաքվի գիտահետազոտական և նախագծային ինստիտուտի հիդրոմեխանիկայի լաբորատորիայում՝ որպես գիտաշխատող: 1962-1965թթ. սովորել է Ադրբեջանի արդյունաբերական ինստիտուտի ասպիրանտուրայում:

Իր ակտիվ կենսագործունեության ընթացքում աշխատել է նախկին Սովետական Միության տարբեր բուհերում՝ յուրաքանչյուր աշխատանք կատարելով բարձր պատասխանատվությամբ ու հավուր պատշաճի: Հեղինակ է բազմաթիվ գիտական ու մեթոդական հոդվածների, ձեռնարկների:

ԱրՊՀ ճարտարագիտության ամբիոնը իր խորին վիշտն ու զորակցությունն է հայտնում Վանյա Ավանեսյանի ընտանիքին:

ԱրՊՀ ճարտարագիտության ամբիոն

ԳՐԻԳՈՐ ՂԱՎԻԹԻ ԴԱՆԻԵԼՅԱՆ



Կյանքի 92-րդ տարում մեզնից հեռացավ մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ, հայտնի մանկավարժ և հոգեբան Գրիգոր Ղավիթի Դանիելյանը:

Ծնվել է 1921թ., Մարտակերտի շրջանի Չափար գյուղում:

Միջնակարգ կրթությունն ստացել է Հաթեր գյուղում, այնուհետև ավարտել Շուշիի մանկավարժական տեխնիկումին կից 8-ամյա մանկավարժական կուրսերը և աշխատանքի անցել Վաղուհաս և Չափար գյուղերում՝ որպես դասավար: 1951թ. ընդունվել է Երևանի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետը, որն ավարտել է 1956թ. և աշխատանքի անցել ՀՀ լուսավորության նախարարության մանկավարժական բուհերի և ուսումնարանների բաժնում՝ որպես ավագ տեսուչ: 1960թ. աշխատանքի է անցել Երևանի մանկավարժական ինստիտուտում՝ որպես տեսուչ-մեթոդիստ և դասախոս:

1979թ. պաշտպանել է ատենախոսություն և ստացել մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան: Այնուհետև տեղափոխվել է ԼՂԻՄ և աշխատանքի անցել Ստեփանակերտի մանկավարժական ինստիտուտում (այնուհետև՝ ԱրՊՀ) նախ՝ որպես մանկավարժության և հոգեբանության ամբիոնի դասախոս, ապա՝ «Արցախի համալսարան» թերթի խմբագիր, գիտքարտուղար, մանկավարժության և հոգեբանության ամբիոնի վարիչ:

2011 թվականից թոշակառու է: Մանկավարժության և հոգեբանության ամբիոնի վարիչ:

Հեղինակ է տասնյակ գիտական և ուսումնամեթոդական հոդվածների:

Նա օգտվում էր ուսանողների և գործընկերների խորը հարգանքից և սիրուց:

Անվանի մանկավարժի և հոգեբանի, պայծառ մտավորականի հիշատակը երկար կապրի սպորողների հուշերում:

ԱրՊՀ մանկավարժության և հոգեբանության ամբիոն

ՓՐԿԵՆԵ ԲԱՐՈՅԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԿՈՐԵԱՆՈՒՄՑ

- Փրկեցե՛ք ինձ, բարի՛ մարդիկ, ես կործանվում եմ, փրկեցե՛ք ինձ ձեզ համար,- դա բարոյականությունն է հուսահատ աղաղակով: Բարոյականությունը, որ կամաց-կամաց հեռանում է մեզանից, օտարանում, դառնում շատերին անհասկանալի մի երևույթ: Կամ էլ մենք ենք հեռանում նրանից՝ մեզ համարելով ժամանակակից: Չգիտեմ՝ ով ումից, սակայն անժխտելի է, որ բարոյականությունը մեր օրերում դարձել է, այսպես կոչված, դեֆիցիտ ու գնալով ավելի, ու ավելի է զգացվում նրա պակասը: Դե՛, նա էլ ստիպված աղաղակում է փրկել իրեն, ո՛վ գիտե, գուցե կլսե՞մ մարդիկ, գուցե դեռ ամեն ինչ կործանված չէ:

Վերջերս Սոսի Հայկի Հակոբյանի ամուսնը կրող միջնակարգ դպրոցում տեղի ունեցավ դաս-միջոցառում: 3-րդ դասարանի դասվար Ռիմա Պետրոսյանը միջոցառման թեմա ընտրեց «Բարոյականությունը և ժողովրդական բանասիրությունը»:

Բարոյականությունը հուսահատության մեջ էր, նրան բազմաթիվ կողմերից խոցել էին հայրենադավը, ազգությամբ, ընկերադավն ու ծնողությանը, չարագործն ու անբանը: Ի՞նչ անել: Որտե՞ղ օգնություն փնտրել: Բարոյականությանը օգնության է հասնում ժողովրդական բանասիրությունը՝ խոստանալով նրան փրկել կործանումից իր բազմաթիվ զավակների միջոցով, որոնք են՝ էպոսը, առակը, հեքիաթը, օրհնանքն ու ասացվածքը: Ժողովրդական բանասիրության զավակներից յուրաքանչյուրը բարձր բարոյականության տարբեր դրսևորումներ են:

Երրորդ դասարանից փոքրիկները ոգևորությամբ էին կատարում իրենց դերերը՝ փորձելով բարոյականության դասեր տալ թե՛ փոքրերին, թե՛ մեծերին, ովքեր ավելի շատ ունեն դրա կարիքը:

Դաս-միջոցառմանը մասնակցում էր ողջ դասարանը՝ ամեն մեկն իր հնարավորության ու ընդունակության չափով: Սա կարևոր հանգամանք է, երբ ողջ դասարանն է մասնակցում բեմադրությանը, ոչ ոք կողմնակի դիտորդի դերում չէր: Նրանք միահամուռ ուժերով փորձում էին մեզ համոզել, թե որքան քաջություն, հայրենասիրություն ու մարդասիրություն կա մեր Սասնա էպոսում: Այն սովորեցնում է լինել մեծահոգի ու մարդասեր նույնիսկ թշնամու հանդեպ: Թե որքան կարևոր են ընկերասիրությունն ու հավատարմությունը, եթե քեզ կարևոր գործ են վստահել ընկեր-

ները: Պետք չէ դավաճանել ընկերներիդ, եթե անգամ խաբեբայի համբավ ունես:

Նրանք՝ փոքրիկները, համոզեցին լինել աշխատասեր, եթե անգամ արքայադուստր ես կամ էլ հենց արքա:

Երեխաները մեզ ներկայացրին նաև «Գողացված գիրը» բեմադրությունը: Դատապարտեցին տգետ ու չարագործ տիրակալին, ով ուզում էր խավարի մեջ պահել երկիրը, փակի տակ դնել իմաստուններին, գիրն ու գրականությունը, որպեսզի հեշտությամբ տիրի անուս մարդկանց: Տգետ արքան կարծում էր, թե ինքն ամենագոր է, հզոր ու ուժեղ, որովհետև շատ են ընդարձակվել իր երկրի սահմանները, կտրել բազմաթիվ գյուղեր, հասել անհնազանդ ծառաների ձեռքեր, արմատից պոկել լեզուներ:

Մեր փոքրիկները, սակայն, համաձայն չէին տգետ արքայի կարծիքին, նրանք քայլ առ քայլ ապացուցեցին, որ ամենար է ապրել առանց լուսիսի, առանց գրի ու մայրենի լեզվի, որ խավարը կկործանի երկիրը, որ առանց գրի մարդ ոչ թե ուժեղ է, այլ՝ պարզապես մժեղ:

Այս միջոցառման մեջ նորություն էր այն, որ դասին մասնակցում էին թե ուսուցիչները, թե՛ աշակերտները և թե՛ ծնողները: Ծնողները զարմանքով պարզեցին, որ իրենց երեխաները նման ընդունակություններ ունեն, իսկ այդ ընդունակությունները նրանց մեջ բացահայտել է ուսուցչուհի Ռ. Պետրոսյանը: Վերջում աղջիկները հարսի շորերով պարեցին «Մոկաց հարսեր» պարը, ներկայացրին «Թմազարա» երգ-պարը: Երեխաների երգն ու պարը պատշաճ ձևով մատուցելու պատիվը պատկանում է երաժշտության ուսուցիչ Արսեն Բաղդասյանին:

Դիտորդները գոհ էին միջոցառումից, նրանք մեծ բավականություն ստացան բեմադրված դասից: Իսկ բարոյականությունն այլևս հուսահատության մեջ չէր, նա հրճվանքից ժպտում էր՝ նայելով այս փոքրիկներին, նրանց զեղեցիկ պարին, հայեցի երգին, հավատում, որ նրանք ամուր կպահեն իրեն ու չեն կործանի անհետ:

Սուսաննա ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Գ. Սոս

ՃՆՈՐՈՎԱԿՈՐԱՆՔ

ԻՆՁ ՀԱՄԱՐ ԾՈՎ Է ՄԻ ԿԱԹՈՒԼ ՅՈՂԸ



Տարիներ են եկել-անցել, բայց նրան ծնկել չեն կարողացել: Նա մնացել է նույն Նորայրը, լավատես ու կենսախիճը, ներող ու հանդուրժող, մեր բառն ու բանը, մեր գիրն ու գրականությունը...

Սկզբից մինչ վերջ պինդ ձգված, պրկված 80 երկար-երկար տարիներ, որ չեն ունեցել դատարկ անկյուններ, կորած, հետք չթողած, անհմաստ օրեր:

Ահա մի բնորոշ փաստ, որ ինքնին խոսում է նրա նվիրվածության, համառության, պարտաճանաչության, պատասխանատվության բարձր զգացումի մասին: Ծուրջ հիսուն տարի (1958-2007) աշխատել է (հիշեցնեն, որ 1953-ին ավարտել է Ստեփանակերտի ուսուցչական ինստիտուտը, ապա՝ Հայկական պետական հեռակա մանկավարժական ինստիտուտի բանասիրական ֆակուլտետը) հայրենի Հաղորդիում: Ասել է թե՛ մոտ կես դար քայլել է նույն նեղիկ ճանապարհով՝ առանց հոգնելու, առանց ուժը, եռանդը խնայելու: Ու այս ամենի շնորհիվ վայելել աշխատանքային ընկերների, ծնողների, աշակերտների հարգանքն ու վստահությունը: Երեխաների առջև բացահայտել մեր մայրենիի գեղեցկությունն ու հմայքը, սովորեցրել մաքուր հայերենով արտահայտել իրենց մտքերն ու զգացումները, նրանց հոգեհարազատ դարձրել մեր քնարերգության հրաշալի գանձերը, ահա ինչն է եղել ամենահարավորիչը նրա համար:

«Մարդիկ ասում են, որ լավ մասնագետ եմ, և ես ցանկանում եմ հավատալ այդ հաճելի «ստին»,- կարդում ենք նրա յուրօրինակ ինքնակենսագրականում, որ գետեղված է «Հաղորդի»-ի ամենավերջին էջում:

Եվ ինձ այնպես է թվում, թե սովորական այս տողերից հանձնարարություն է ծորում, պարզություն ու շիտակություն:

Ո՞րն է լավ մարդ դառնալու չափանիշը, ի՞նչ է պետք դրա համար. այս հարցերն են շարունակ հուզել Նորայր Ավետիսյանին: Ահա ինչու նա միշտ ջանացել է զարգացնել սովորողների ճաշակն ու գեղագիտական զգացումները, նրանց մեջ դաստիարակել գաղափարական-քաղաքական վեհ հատկանիշներ, բնավորության ու վարքագծի հաստատուն գծեր:

Ու սա նրան հաջողվել է, քանզի նա խորապես գիտի մեր ազգային մշակույթը, մեր հին ու նոր գրականությունը, մշտապես հաղորդակից է լինում կյանքի նորույթներին, այսօրվա դարից առջև ծառայած խնդիրներին:

- Կրթական համակարգի բարեփոխումների կենտրոնում,- ասում է նա,- պետք է տեսնել ուսուցչին: Ցանկացած փոփոխություն իրականացնելու համար անհրաժեշտ են խոր գիտելիքներ ու հմտություններ: Հետևաբար՝ կարևոր է ինչպես ուսուցչի մասնագիտական զարգացումը, այնպես էլ ծառայած խնդիրների լուծման առումով նորովի մոտեցումների ու անհրաժեշտ պայմանների առկայությունը:

Այսպես է դատում վաստակաշատ մանկավարժը, որի հոգևոր աշխատանքն ամեն օր մեր գրականության մեծերն են գրույցի նստում. եղիշե Չարենց, Համո Սահյան, Հովհաննես Թումանյան, Պարույր Սևակ, Ավսել Բակունց, Հովհաննես Ծիրազ...

Ամենակարևորը՝ հայ պոեզիայի, մշակույթի, մեր ժողովրդի պատմության հանդեպ ունեցած իր հիացմունքը տասնամյակներ շարունակ նա փոխանցել է իր սաներին, երիտասարդ ուսուցիչներին, բոլորին:

Ժամանակի քուրայում թրծված այսպիսի խոսք կա. «Մարդ լինելու համար մանկավարժ լինելը պարտադիր չէ, բայց մանկավարժը պարտավոր է մարդ լինել: Այս խորիմաստ բառերը տարիներ առաջ նա գրի է առել իր կազմած «Ասույթների հավաքածու» մատյանում ու սիրում է ամեն պատեհ առիթով հիշեցնել նոր-նոր կյանք մտած ջահելներին՝ ավելացնելով. «Այո, ամենադժվար մասնագիտությունը մարդ լինելն է: Ես համոզված եմ սրանում»:

Հիրավի, մանկավարժ լինելուց զատ՝ նա մաքուր խղճի ու ազնիվ հոգու տեր անձնավորություն է, որին խորթ են քծնանքն ու շողոքորթությունը, խարդավանքն ու խաբուրթությունը, սուտն ու կեղծիքը:

Եվ ամենևին էլ զարմանալի չէ, որ նրան վստահում ու

դիմում են ոչ միայն դարից հարյուրավոր շրջանավարտներն ու աշակերտները, այլև նրանց ծնողները, պարզապես մարդիկ, որ կարեկցող սրտի, մտածված խոսքի, բարեկամական վերաբերմունքի կարիք ունեն: Այսպիսին է եղել (և՛ է) 1933-ին հեռավոր այն գյուղի՝ Հաղորդիի հողից ու ջրից սերված նոր այրը (Նորայր), որի համար օրրանն իր ամենաչքնաղ վայրը, անկյունն է աշխարհում: Հասկանալի է, Փարիզից հետո: Կատակում են, որովհետև ինքը շատ է սիրում կատակը, սրամտությունը, ասելիքը հումորով համեմելը, ծաղկեցնելը, հաճելի դարձնելը, մի բան, որ, թերևս, պակաս կարևոր չէ մարդ անհատի ընդհանուր զարգացածության, կրթվածության, մեծության մասին անսխալ պատկերացում կազմելու համար:

Հումորով օժտված լինելն արժանիք է, որ հատուկ պիտի լինի դասարան մտնող ու երեխայի միտքը հղկող իսկական ուսուցչին:

Դե իսկ, իմ գրչակից ընկերը (մեր մտերմությունը շուրջ վեց անգամ տասը տարիների վաղեմություն ունի) ճիշտ որ իսկական ուսուցիչ է, որի համար մանկավարժությունը ավելին է եղել, քան զուտ մասնագիտությունը: Ասենք, որ նա երկար տարիներ տնօրեն է եղել, ու նրա ղեկավարության օրոք շրջանում, մարզում անցկացված երգ-երաժշտության փառատոներում, առարկայական օլիմպիադաներում, սպորտային մրցումներում սովորողներն իրենց վատ չեն դրսևորել, մի բան, որ կոլեկտիվի միասնական ջանքերի արգասիք կարելի է համարել: Բաց դասերի, քննարկումների, հետաքրքիր միջոցառումների, հանդիպումների մասին չեն խոսում: Ու սա քիչ բան չի ասում նրա կազմակերպչական ցիլի, պահանջկոտության ու հոգատարության մասին: Այո, հանձնարարված գործին նա երբեք մատների արանքով չի մայել: Բնավորություն է, որ գալիս է մանկուց:

- Մանկավարժն ու բժիշկը սխալվելու իրավունք չունեն, քանզի երկուսն էլ գործ ունեն կենդանի մարդու հետ: Ես իմ ողջ կյանքում առաջնորդվել եմ այս սկզբունքով,- ակնարկում է նա:

Ու մարդ դժվարանում է կողմնորոշվել՝ նրա համար բնական խառնվածքն է առաջնային եղել, թե՛ մանկավարժի ոգու սխրանքն ու արիությունը: Երևի երկուսն էլ:

Համենայն դեպս, նա բացել է լուսավոր մի ուղի, որով այժմ ընթանում են շատ-շատերը՝ որպես իր արժանի հետնորդներ, կրթական ոլորտի նվիրյալներ: Ուշագրավ մի երևույթ է: Ժամանակին նա կարողացել է ունենալ համոզել, որ դասագրքով բավարարվել չի կարելի, որ պետք է օգտվել լրացուցիչ աղբյուրներից՝ աշակերտների միտքը, ուղեղը շարժելու, դասը հետաքրքիր ու արդյունավետ դարձնելու համար:

Եթե այս ամենին գումարենք այն, որ մանկավարժական գործունեությանը զուգահեռ նա զբաղվել ու զբաղվում է գրական-ստեղծագործական աշխատանքով, ամեն ինչ պարզ ու հստակ կլինի: Նա հինգ գրքերի՝ «Սիրտս անհամ-գիստ է», «Իմ Պղը-Պուղին», «Պղը-Պուղու նորոյա արկածները», «Բալլադ գոհված գինձկորի ու մոր մասին», «Հաղորդի» (վեցերորդը տպարանում է), մանուկուն տպագրված հարյուրավոր ուշագրավ հոդվածների հեղինակ է: Այսօր էլ նա գիրքը, գրիչը ձեռքից ցած չի դնում: «Մարդ որ օրական գոնե 50-60 էջ չկարդա, մեր լեզվի համը, քաղցրությունը կհիմանա», - ասում է:

Այս օրերին նա հաճախակի է մայրու-քրքրում տարիների իր դեղնած-խոնացած թղթերը, սևագրերը, արածը «կշռում»: Իսկ արածը քիչ չէ: Ավելին՝ արժե տեսնել ու գնահատել:

- Մի մաքր՝ ու, մի բարի անուն թողնեն սերունդներին ու գնամ,- սա է իմ երազանքը: Ինձ պետք չէ ոչ փառք, ոչ կայք, ոչ կարողություն: Այնպես որ, ես գոհ եմ իմ անցած ուղուց, իմ տպագիր տողերի նկատմամբ ընթերցողի մոտեցումից:

Միանգամայն բնական այս զգացողությունը, թվում է, խտացված է Հ. Սահյանի «Շնորհակալ եմ» բանաստեղծության տողերում.

Չեմ ուզում փառքի փոթորկուն ծովեր, Ինձ համար ծով է մի կաթիլ ցողը:

Արտասանում է նա՝ ասես վեհացած ու վերացած...

Այս գեղեցիկ տողերով էլ ավարտենք մեր ասելիքը 80-ը բողբոջ շնորհաշատ մանկավարժի, գրողի մասին: Ի սրտե շնորհավորենք մեր մարդկանց, որ Տիրոջ կամքով նա դեռ շատ տարիներ «ուրբը կախ գցի» ու ստեղծագործի՝ չնոռանալով, որ առջևում իրեն սպասում են ուրիշ տոներ, անյակներ... Համոզված եմ, որ այս փառահեղ անյակները տանող զառիվեր ճանապարհը եղբայրն իմ կանցնի առանց դադարի, առանց որևէ կանգառի:

Միջալի ԲԱԼՅԱՆ
20-րդ դարի Արցախի լավագույն
մանկավարժ

ՄԻՇՏ ԵՐԻՏԱՍԱՐԳ ՄԵՐ ԳՈՐԾԵՆԿԵՐԸ



Կան մարդիկ, ովքեր իրենք են տնօրինում իրենց ճակատագիրը, վարքը, եռանդը, աշխատասիրությունը, իրենք են լուծում իրենց երիտասարդ մնալու հարցերը:

Այդպիսիներն ապրում են բնության հետ ընկերացած, վերցնում բնությունից և տարբեր ձևերով՝ գրականության, երաժշտության, կերպարվեստի միջոցով վերադարձնում են նրան, վերցնում և առատորեն շարժ են տալիս շրջապատում իրենց շուրջը ստեղծելով բարիք, լույս և ջերմություն, բարոյական արժեքներ ու գեղեցկություն, ձևավորում մարդկային առողջ փոխհարաբերություններ:

Այլ կերպ՝ ամեն մարդ ինքն է ստեղծում իր կենսագրությունը: Գյուլչորա Արզումանյանը ստեղծել է իրեն արժանի և ուշագրավ կենսագրություն: Ծնվել է մանկավարժությանը նվիրվելու առաքելությունով:

Աշխատանքային կենսագրությունը սկսել է 1972թ.՝ աշխատանքի անցնելով հարազատ գյուղի դպրոցում որպես ավագ ջոկատավար, հետո՝ մաթեմատիկայի ուսուցչուհի, փոխտնօրեն: Հետո կոմերտական աշխատանք՝ Ստեփանակերտի քաղկոմում:

Մանկավարժությունը Գ. Արզումանյանի կոչումն է, ուստի նա նորից դպրոցում էր, աշակերտների հետ: 1979-1991թթ. Այգեստանի միջնակարգ դպրոցի փոխտնօրենն էր, իսկ 1991-ից առայսօր՝ Խնածախի միջնակարգ դպրոցի տնօրենը:

Թե այդ տարիներին ինչքան գեղեցիկ միջոցառումներ ու ծրագրեր են իրականացվել երկու կրթօջախներում, ապավինենք բոլոր շրջանավարտների հիշողությանը. միայն նրանք կարող են ամենաճշգրիտ մանրամասնությամբ ներկայացնել Գ. Արզումանյան մանկավարժին, նվիրյալին, հայրենասերին:

Ինչպիսի հարցեր առաջադրել վաստակաշատ մանկավարժը, թիվ մեկ պահանջը գտնում և դնում էր հայեցի դաստիարակության մեջ՝ սովորողներին տալով ազգային ուսուցում և դաստիարակություն:

Ընկեր Արզումանյանը, մեծ նշանակություն տալով սովորողների արժեքային համակարգի ձևավորմանը, գտնում է, որ նրանց մեջ անհրաժեշտ է զարգացնել հարցասիրություն ու հետաքրքրություն, ինքնուրույնություն, գիտունակություն: Նա գտնում է, որ մտավոր դաստիարակության առանցքը պետք է լինի ձևավորված գիտական աշխարհայացքը:

Գ. Արզումանյանը ապրում է «գեղեցիկի օրենքներով»՝ առաջնորդվելով ամեն ինչում գեղագիտական զգացումները, արվեստի տարբեր բնագավառների նկատմամբ հետաքրքրություններ և նախասիրություններ, գեղեցիկի պահանջները դաստիարակելու սկզբունքներով: Նա մանկավարժական նորարարության, համագործակցային մանկավարժության լավագույն իրականացմանն է:

Խնածախի միջնակարգ դպրոցը տնօրենի անմիջական նախաձեռնությամբ լավագույն մանկավարժական ձեռքբերումների, ավանդույթների կրողն ու պահպանողն է:

Գ. Արզումանյանի նշանաբանն է՝ ի հայտ բերել որոշակի կարողություններով օժտված, ներդաշնակորեն զարգացած երեխաների և ստանձնել նրանց անհատականության ձևավորման գործը: Նա դեմ է վարչական կոշտ մեթոդներով սովորողների հետ տարվող ցանկացած աշխատանքի:

Ըստ նրա՝ մանկավարժը պետք է լրիվությամբ իմանա սաների տարիքային, հոգեբանական, անհատական առանձնահատկությունները, հոգեկան ապրումները: Հստակ պատկերացնելով, որ կյանքի հետ դպրոցի ոչ ամուր կապի ժամանակակից պայմաններում աշակերտների հանրօգուտ գործունեությունը սահմանափակելու պայմաններում նկատվում է դպրոցականի սոցիալական ակտիվության և ինքնագործունեության սառնում, Գ. Արզումանյանն իր պրպտումներում դրա լուծման ուղիները ևս գտել է: Համայնքի հրատապ հարցերը նա համարում է նաև դպրոցի հարց: Ցանկացած հարցում օժանդակում է, խորհրդակցում և խորհուրդ տալիս: Արդի պայմաններում արտադարոցական և արտադասարանական դաստիարակությունը համարելով սովորողների բազմակողմանի զարգացման կարևորագույն միջոցներից մեկը՝ նա միշտ որոնումների մեջ է համայնք-դպրոց-բնություն-հասարակություն քառուղիներում գտնելու սովորողների օպտիմալ համագիստն ու հազեցած առօրյան: Համայնքի տարածքի աղբյուրների մաքրությունը, հուշարձանների խնամքն այն ամենամյա աշխատանքներն են, որոնք աշակերտները կատարում են ամենամյա պատրաստականությանը:

Դպրոցում բարձր հիմքերի վրա է գիտակցական կարգապահությունը, որը տնօրենի և մանկավարժական կոլեկտիվի տարիների բեղմնավոր աշխատանքի արդյունք է:

Այդպիսին է Գյուլչորա Արզումանյանը. սկսած գործը եռանդով կատարելու, պատասխանատու և պատրաստակամ սովորությունը դարձել է բնավորություն: Նրա աշխատասիրությունը, համառությունն ու աներեր կամքը հաղթահարել են բոլոր խոչընդոտները՝ օրինաչափ դարձրել հաղթանակներն ու հաղթանակի բերկրանքը:

Շնորհավորենք մեր գործընկերոջը՝ ծննդյան 60-ամյակի առթիվ և ակնկալենք, որ իր երիտասարդ հոգով նա կշարունակի շնայլորեն բարիք, լույս, ջերմություն, գեղեցկություն սփռել շրջապատում:

Այժմ մարդիկ նվաճում են ոչ թե ֆիզիկապես՝ գերեվարվելով, այլ հոգեպես, տեսանելիորեն մնալով ազատ ու անկախ: Գյուլչորա Արզումանյանը մեզ գրավում է հոգեպես:

Սվեդլանա ԱՄՐՅԱՆ
Ասկերանի շրջվարչակազմի
կրթության բաժնի գլխավոր մասնագետ

ՄԱՐԶԱԿԱՆ

ՈՒՉՄԱԿԱՆԱՅՎԱԾ ՀՆՎԱՄԱՐՏԻ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՄՐՅՈՒՄՆԵՐ

Մարտի 25-27-ը Ստեփանակերտի հանրապետական մարզադաշտում կայացան ԼՂՀ հանրակրթական ուսումնական հաստատությունների 8-9-րդ դասարանների պատանիների միջև «Ռազմականացված հնգամարտի» համրապետական մրցումներ՝ նվիրված Արցախյան շարժման 25-ամյակին:

Մասնակցում էին Ստեփանակերտ քաղաքի և ԼՂՀ բոլոր շրջանների հավաքական թիմերը:

Մրցումների ծրագրով նախատեսված էին հետևյալ մրցաձևերը.

- վազք 100 մետր,
- վազք 1000 մետր,
- վերելք ուժով,
- նռնակի նետում հեռավորության վրա,
- ռազմակիրառական կոմբինացված փոխանցումավազք:

Յուրաքանչյուր թիմում ընդգրկված էին 5 տղաներ, որոնք պետք է մասնակցեին բոլոր մրցաձևերին:

Մրցումների հանդիսավոր բացման ժամանակ ԼՂՀ կրթության և գիտության փոխնախարար Մ. Համբարձումյանը, ողջունելով մասնակիցներին, կարևորեց նման մրցումների կազմակերպումը՝ որպես ռազմամարզական կարևոր միջոցառում, ֆիզիկապես ուժեղ հայրենիքի պաշտպաններ նախապատրաստելու գործում: Քանի որ մասնակցելով նման մրցումների՝ նրանց մոտ կզարգանա ռազմամարզական կոմբինացվածությունը:

Մասնակիցներին ողջունեց ու հաջողություններ մաղթեց նաև ԼՂՀ պաշտպանության նախարարության ռազմա-հայրենասիրական դաստիարակության և ՀԿՀԿ բաժնի պետ, գնդապետ Բ. Մուրադյանը:

Մրցումների անցկացման կարգն ու վիճակահանությանը հերթականությունը որոշելուց հետո սկսվեցին մրցումները:

Մրցումների առաջին օրն անցկացվեցին մարզական չորս մրցաձևերը, իսկ երկրորդ օրը մասնակիցները մրցեցին ռազմակիրառական կոմբինացված փոխանցումավազք մրցաձևից:

Ծավալված համառ և անզիջուն մրցակցության արդյունքներով մրցավարական հանձնախումբը որոշեց հաղթող հավաքականներին.

- 1-ին տեղ - ք. Ստեփանակերտ
 - 2-րդ տեղ - Մարտունու շրջան
 - 3-րդ տեղ - Մարտակերտի շրջան
- Անհատական առաջնությունում հնգամարտի արդյունք-

ներով 1-ին տեղն զբաղեցրեց Ժիրայր Ջաքարյանը՝ Ստեփանակերտի հ. 6 հիմնական դպրոց, 2-րդ տեղը՝ Թաթուլ Սարգսյանը՝ Շահումյանի շրջանի Ականաբերդի միջնակարգ դպրոց, 3-րդ տեղը՝ Անդրանիկ Իսանյանը՝ Ստեփանակերտի հ. 3 միջնակարգ դպրոց:

Վազք 100 մետր և վերելք ուժով մրցաձևերում հաղթող ճանաչվեց Ժիրայր Ջաքարյանը՝ Ստեփանակերտի հ. 6 հիմնական դպրոցից:

1000 մետր վազքատարածությունում հաղթող ճանաչվեց Գեորգի Գասպարյանը՝ Մարտակերտի հ. 1 ավագ դպրոցից:

Նռնակի նետում հեռավորության վրա մարզաձևում հաղթող ճանաչվեց Թաթուլ Սարգսյանը՝ Շահումյանի շրջանի Ականաբերդի միջնակարգ դպրոցից:

Ռազմակիրառական կոմբինացված փոխանցումավազքի մրցումներում լավագույնը ճանաչվեց Արթուր Ասրյանը՝ Ստեփանակերտի հ.3 միջնակարգ դպրոցից:

Թիմային և անհատական հաշվարկներով հաղթողները ԼՂՀ կրթության և գիտության նախարարության կողմից արժանացան համապատասխան կարգի դիպլոմների, պատվոգրերի, թանկարժեք նվերների և դրամական պարգևների:

Պատվոգրերի և հուշանվերների արժանացան հինգ մրցաձևերում լավագույններ ճանաչված տղաները:

Դրամական խրախուսանքի արժանացան մրցանակային տեղեր գրաված՝ Ստեփանակերտ քաղաքի, Մարտունու և Մարտակերտի շրջանների հավաքականների մարզիչները:

Պարգևատրումները կատարեց և հաղթողներին շնորհավորեց ու հետագա հաջողություններ մաղթեց ԼՂՀ ԿԳ փոխնախարար Մ. Համբարձումյանը:

Թիմային և անհատական հաշվարկներով հաղթողները պատվոգրեր և արժեքավոր նվերներ ստացան ԼՂՀ պաշտպանության նախարարության կողմից: Պարգևատրումները կատարեց նախարարության ռազմահայրենասիրական դաստիարակության և ՀԿՀԿ բաժնի ավագ սպա՝ կապիտան Դ. Օհանջանյանը:

Ռազմակիրառական կոմբինացված փոխանցումավազքի մրցումներում 1-3-րդ տեղեր գրաված Ստեփանակերտ քաղաքի, Շուշիի և Հադրութի շրջանների հավաքականները պատվոգրեր ու արժեքավոր նվերներ ստացան ԼՂՀ ԿԱ փրկարար ծառայության տնօրենության կողմից: Պարգևատրումները կատարեցին գնդապետ Ա. Ջավադյանը և փոխգնդապետ Յ. Դավթյանը:

ԲԱՍԿԵՏԲՈՒԻ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՄՐՅՈՒՄՆԵՐ

Ստեփանակերտի հ. 3 միջնակարգ դպրոցի մարզադահլիճում կայացան ԼՂՀ հանրակրթական ուսումնական հաստատությունների 5-9-րդ դասարանների աղջիկների և տղաների միջև բասկետբոլի հանրապետական մրցումներ: Մասնակցում էին մայրաքաղաքի և ԼՂՀ հինգ շրջանների հավաքական թիմերը: Մրցումներին թիմեր չէին ներկայացրել Շահումյանի և Մարտակերտի շրջանները:

Մարտի 11-15-ը մրցեցին աղջիկների, իսկ 18-22-ը՝ տղաների հավաքականները:

Ուրախությամբ կարելի է փաստել, որ բասկետբոլ մարզաձևը գնալով մեծ մասսայականություն է վայելում դպրոցականների շրջանում, ինչի ապացույցը նախորդ տարիների համեմատ թե՛ աղջիկների և թե՛ տղաների ցուցադրած հաջողված խաղերն էին:

Հատկապես գրավիչ էր տղաների միջև եզրափակիչ խաղը Ստեփանակերտ քաղաքի և Հադրութի շրջանի հավաքականների միջև:

Նման մրցումների կազմակերպման հիմնական նպատակներից մեկն է՝ բացահայտել լավագույն մարզիկ դպրոցականներին հանրապետության աղջիկների և տղաների հավաքականները համալրելու համար:

Ծավալված համառ և անզիջուն մրցակցության արդյունքներով մրցավարական հանձնախումբը որոշեց հաղթողներին:

Աղջիկների մրցապայքարում 1-ին տեղը գրավեց Ստեփանակերտ քաղաքի թիմը, 2-րդ և 3-րդ տեղերը համապատասխանաբար զբաղեցրին Ասկերանի և Հադրութի շրջանների հավաքական թիմերը:

Պատանիների մրցապայքարում մրցանակային տեղերը բաշխվեցին հետևյալ կերպ. 1-ին տեղ՝ Ստեփանակերտ քաղաք, 2-րդ տեղ՝ Հադրութի շրջան՝ 3-րդ տեղ՝ Քաշաթաղի շրջան:

Նրանք պարգևատրվեցին ԼՂՀ կրթության և գիտության նախարարության դիպլոմներով ու գավաթներով:

Թիմերի բոլոր 10-ական անդամները պարգևատրվեցին համապատասխան կարգի մեդալներով:

Ձեռքի ժամացույցներ ստացան և ԼՂՀ կրթության և գիտության նախարարության պատվոգրերի արժանացան լավագույն խաղացողներ ճանաչված դպրոցականները. աղջիկներից՝ Քրիստինե Ասրյանը (Ստեփանակերտի ֆիզմաթ դպրոց), իսկ տղաներից՝ Յուրի Հարությունյանը (Ստեփանակերտ քաղաքի հ. 3 միջնակարգ դպրոց):

Պարգևատրումները կատարեց, հաղթողներին շնորհավորեց և հետագա անձնական ու մարզական հաջողություններ մաղթեց ԼՂՀ ԿԳ փոխնախարար Մ. Համբարձումյանը:

Տղաների մրցումների հանդիսավոր փակմանը ներկա էր ԼՂՀ բասկետբոլի ֆեդերացիայի նախագահ Վ. Միքայելյանը, որը մարզական համագոյությունը նվիրեց 2-րդ տեղը գրաված Հադրութի շրջանի հավաքականի բոլոր անդամներին, իսկ 1-ին տեղը գրաված Ստեփանակերտ քաղաքի հավաքականի անդամները ֆեդերացիայի նախագահի կողմից արժանացան դրամական պարգևների:

Մուկաթ ՇԱՀՐԱՄԱՆՅԱՆ

Հրաժեշտի խոսք

ԱՊՐԵՑ ԼԵՅՈՒՆ, ԿԵՆՍԱՄԻՆԻԴ ԿՅԱՆՔՈՎ



Այս կյանքին ու աշխարհին անժամանակ հրաժեշտ տված մեր անմոռանալի գործընկերուհի, սիրելի Ստելլա Գաբրիելյան:

...Հրաժեշտի վերջին ճանապարհով էլ անցավ հարազատ դպրոցի մոտով... Ապրածդ կենսախիղճ կյանքի ողջ պարունակումն ասես իմաստավորվեց և ամբողջացավ այն ակնթարթների մեջ, երբ վերջին անգամ քո գեղեցիկ, բայց սառած հայացքով հրաժեշտ տվիր դպրոցի շեն տանող աստիճաններին, քո հպարտ կեցվածքը քանի՜ հարյուրերորդ անգամ իրենց գիրկն առած պատերին:

Ապրեցիր ընդամենը քառասունութ գարուն, բայց ապրեցիր լեցուն, կենսախիղճ կյանքով, դժվար պահերդ անգամ կյանքով էին լցված, բնությունը իր գույների ներկայանակից քեզ բաժին էր հանել ամենից վառ գույները, և զգացմունքային բնավորությամդ պատճառով կյանքի՝ քեզ մատուցած բոլոր մարտահրավերները տարել ես սրտով ու հոգով...

Անընդհատ վազքի մեջ էիր, քո անսպառ աշխատասիրությամբ ու վճռականությամբ ուզում էիր բռնել, պահել տարածությունն ու ժամանակը...

Ավա՜ր... Կանգնեց քո ժամն ու ժամանակը... Սիրելի Ստելլա, մենք հավատում էինք, որ կհաղթես դուռդ բախող աննահանջ ու անողորմ սահին, հավատում էինք, քանզի ուժեղ էիր, միշտ հպարտ ու հաղթական կեցվածքով, կյանքին՝ սիրահար... ու մեծ վիշտ ու ցավ թողնելով քեզ ճանաչողների սրտում, գնացիր, հրաժեշտ տվիր բոլորիս՝ մնալով միշտ գեղեցիկ...

Մենք՝ քո սաները, քո գործընկերները, քեզ հետ կյանքի քաղցր հուշեր ունեցողները, չենք մոռանա քեզ, քո հիշատակը վառ կպահենք մեր սրտերում...

Ստեփ. հ. 2 հիմնական դպրոցի մանկավարժական կոլեկտիվ

ԱՐՈՒՄՅԱԿ ՆԵՐՍԵՍԻ ԲԱԲԱՅԱՆ



Մարտի 8-ին երկրային կյանքին հրաժեշտ տվեց բազմավաստակ ուսուցչուհի, բազմազավակ մայր Արուսյակ Ներսեսի Բաբայանը:

Ա. Բաբայանը ծնվել է 1935թ. մարտի 12-ին, Կոլխուզաշեն գյուղում: Միջնակարգ ավարտելուց հետո 1952-1954թթ. ուսանել է Ստեփանակերտի երկամյա մանկավարժական ինստիտուտում՝ ձեռք բերելով ֆիզիկա և մաթեմատիկա մասնագիտություն: Մանկավարժական աշխատանքի մկրտությունն ստացել է Ծովատեղի ութամյա դպրոցում, այնուհետև 1955-ից մինչև թոշակի անցնելն աշխատել է Կոլխուզաշենի միջնակարգ դպրոցում՝ որպես մաթեմատիկայի ուսուցչուհի: Պարտաճանաչ ու սիրված ուսուցչուհի էր, մատաղ սերնդի կրթության ու դաստիարակության գործին նվիրյալ, բարու և ազնվության տիպար: Սրտացավ ընկեր էր, բարեկամ ու հարևան: Ուներ բարձր պատասխանատվություն ցանկացած գործի նկատմամբ և պարտքի զգացում: Ոչ միայն դասավանդելիս, այլև թոշակառու եղած տարիներին օգտվել է իր սաների հարգալից և անկեղծ սիրուց: Ամբողջ գյուղի համար «ընկեր Բաբայան էր»:

Հիմա մա չկա. բռնել է հավերժության ճանապարհը, բայց կիիշեն նրան բոլորը՝ ընկերները, սաները, գյուղի հասարակությունը, բոլոր նրան ճանաչողները՝ որպես բարի, անսպառ, սրտացավ և աշխատասեր անձնավորություն:

Կոլխուզաշենի միջնակարգ դպրոցի մանկավարժական կոլեկտիվ